Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 118 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ 9

ԱՄՓՈՓԱԳԻՐ 12

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 14

I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 20

1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ 20

2. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5112. օբյեկտ՝ Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարում. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ 21

3. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձոր համայնքի Հալաբյան փողոցի կամրջի արտաքին լուսավորության ցանցի հրդեհից վնասված հատվածի ապամոնտաժման և վերականգնման աշխատանքներ. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ 21

4. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ 23

5. Կոմունալ ծառայությունների գծով 2019 թվականի ընթացքում նախատեսված և փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ 24

6. ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ.-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի մասով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ 30

7. Սահմանված կարգով ընտրված օպերատորների կողմից 2019թ-ի ընթացքում կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վերաբերյալ 31

8. «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ 33

9. Համայնքապետարանի կարիքների համար կատարված գնումների վերաբերյալ 35

10. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. Գնումների պլանավորման վերաբերյալ 36

11. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. Կազմակերպված մրցույթների ընթացակարգի վերաբերյալ 38

12. ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների անհամապատասխանության վերաբերյալ 39

13. Հողի հարկի վերաբերյալ 42

14. Գույքահարկի վերաբերյալ 45

II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 54

15. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113, օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Կատարողական ակտի ընդհանուր գումարում թվաբանական սխալ 54

16. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ 54

17. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի Հայքի հրապարակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ 55

18. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5112. օբյեկտ՝ Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ 56

19. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ 57

20. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ 58

21. Աղբահանության վճարների վերաբերյալ 59

22. «Տրանսպորտային նյութեր» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ 62

23. Վառելանյութի համար կատարված ծախսերի վերաբերյալ.....63

24. Ավտոպահեստամասերի համար կատարված ծախսերի վերաբերյալ 65

25. Էներգետիկ ծառայություններ. Վանաձոր քաղաքի փողոցների գիշերային լուսավորություն համար ծախսված էլեկտրաէներգիայի վերաբերյալ 67

26. «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ 69

27. Աշխատանքի վարձատրության գծով կատարված ծախսերի վերաբերյալ. ՀՀ պետական սահմանը հատած Համայնքապետարանի աշխատակիցների վերաբերյալ71

28. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող ՀՈԱԿ-ների աշխատակիցների վարձատրության վերաբերյալ..... 72

29. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. ձեռքբերման գների վերաբերյալ.....73

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ.....76

30. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. նախագծի վերաբերյալ.....76

31. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ. Միավորի արժեքների փոփոխության վերաբերյալ 77

32. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Նախագծի փոփոխության վերաբերյալ 78

33. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Սալիկների նախագծային չափերի վերաբերյալ.....78

34. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Նախահաշվի վերաբերյալ.....79

35. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Օդափոխիչների վերաբերյալ 79

36. Սանիտարական մաքրման և աղբահանության գծով 2019թ-ի համար անցկացված գնումների գործընթացի վերաբերյալ.....80

37. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. նախահաշվային գների վերաբերյալ 82

38. ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված մրցույթների մասնակիցների վերաբերյալ84

39. ՀՈԱԿ-ների սննդի ձեռքբերման համար կատարված ծախսերի վերաբերյալ ... 85

40. Հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների ապառքների ժամկետայնության վերաբերյալ 87

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 166-Ա որոշում, 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 226-Ա որոշում, 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 02-Ա որոշում, 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 05-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Վանաձորի համայնքապետարան:
Հաշվեքննության առարկան	Վանաձորի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 2. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 5. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք 6. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2019 թվականի հունվարի 1–ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31–ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը:
Հաշվեքննության կասեցում	2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշում:
Հաշվեքննության վերսկսում	2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշում:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ, զննում և դիտարկում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀԿՏՀ	Համայնքապետարանի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել Վանաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնքապետարան) կողմից 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը, որը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունում և Համայնքապետարանի կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Համայնքապետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի:

Համայնքապետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, «Հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնների», Աուդիտի Բարձրագույն Մարմնի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մշակված «ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանության» և «Համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության» համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունը զերծ է էական խեղաթյուրումներից և ծրագրերի կատարումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվությունում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ծրագրերի կատարման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվության պատրաստման, ճշմարիտ ներկայացման և ծրագրերի իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Հաշվեքննության աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվության պատրաստման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելու, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության ամբողջական ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ համապատասխանության հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Մենք գտնում ենք, որ ձեռք չենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ ֆինանսական հաշվեքննության մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 1-ին մասի 1-ից 14-րդ կետերում, Համայնքապետարանի կողմից 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը 336,659.90 հազ. դրամով չի համապատասխանում ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ֆինանսական հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգման հիմք

Ինչպես ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 2-րդ մասի 15-ից 29-րդ կետերում, ինչպես նաև 1-ին մասի 5-ից 7-րդ կետերում, ֆինանսական հաշվետվությունները 283,439.15 հազ. դրամով խեղաթյուրված են:

Համապատասխանության հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի ազդեցության, Համայնքապետարանի կողմից ծրագրերի կատարումը համապատասխանում է ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ֆինանսական հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցերի ազդեցության, Համայնքապետարանի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Համայնքապետարանի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Կարեն Առուստամյան

04 մայիսի 2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան 19 փող., ք. Երևան, Հայաստան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է Վանաձորի համայնքապետարանի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննության կատարման ժամանակահատվածն է 2020թ. սեպտեմբերի 22-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 30-ը: Սակայն հիմք ընդունելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված պայմանները և ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հաստատելու մասին» թիվ 1586-ն որոշումը՝ Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 248-Ա որոշմամբ հաշվեքննությունը վերսկսվել է:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը հաշվեքննության օբյեկտի կողմից հիմնականում ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

4213 «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել են անհամապատասխանություններ և 251,505.90 հազ.դրամ խեղաթյուրում՝ կապված աղբահանության և սանիտարական մաքրման գծով ծախսերի հետ, որոնք առաջացել են համայնքում օրենքի պահանջներին համապատասխան սանիտարական սխեմա չունենալու հետևանքով: Նշված փաստերն արտացոլված են 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերում (էջ 24-33):

4264 «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 11,906.00 հազ.դրամ խեղաթյուրում՝ կապված Համայնքապետարանի կողմից վառելանյութի և ավտոպահեստամասերի համար կատարված ծախսերի մասով: Նշված խեղաթյուրումներն արտացոլված են 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերում (էջ 62-67):

5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 10,919.38 հազ.դրամ խեղաթյուրում կապված «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների, Վանաձորի Հայքի հրապարակի բարեկարգման

աշխատանքների ձեռքբերման, Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարման, Համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման հետ: Վերոնշյալ խեղաթյուրումներն արտացոլված են ընթացիկ եզրակացության 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերում (էջ 54-59):

4511 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 4,682.33 հազ.դրամ խեղաթյուրում՝ կապված սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթների գների մասով, ինչպես նաև Համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող ՀՈԱԿ-ների աշխատակիցների վարձատրության մասով՝ առաջացած աշխատակիցների բացակայություններից: Ընթացիկ եզրակացությունում վերոնշյալ խեղաթյուրումներն և անհամապատասխանություններն արտացոլված են 28-րդ և 29-րդ կետերում (էջ72-76):

4212 «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 3,086.25 հազ.դրամ խեղաթյուրում՝ էլեկտրաէներգիայի ծախսի դրվածքային և փաստացի հզորությունների միջև: Ընթացիկ եզրակացությունում վերոնշյալ խեղաթյուրումն արտացոլված է 25-րդ կետում (էջ 67-69):

4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 1,300.00 հազ.դրամ խեղաթյուրում կապված շահույթ հետապնդող հիմնարկներին նվիրատվություն հատկացնելու հետ: Նշված փաստերն արտացոլված է 26-րդ կետում (էջ 69-71):

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է 39.28 հազ.դրամ խեղաթյուրում՝ կապված աշխատակիցների բացակայությունների հետ: Ընթացիկ եզրակացությունում վերոնշյալ խեղաթյուրումն արտացոլված է 27-րդ կետում (էջ 72-73):

5121 «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է անհամապատասխանություն կապված կատարված ծախսերի հետ, որը ընթացիկ եզրակացությունում արտացոլված է 8-րդ կետում (էջ 33-35):

5122 «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածով հայտնաբերվել է անհամապատասխանություն կապված կատարված ծախսերի հետ, որը ընթացիկ եզրակացությունում արտացոլված է 9-րդ կետում (էջ 35):

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2019թ.

Հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,205,206.80**	**2,971,182.55**
Եկամտատեսակները		**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	**7131**	110,403.40	102,887.30
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	**7131**	34,238.60	32,158.14
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	**7136**	330,390.40	342,932.07
Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար	**7145**	3,930.00	4,260.00
Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	**7145**	50.00	220.00
Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար	**7145**	3,400.00	4,176.80
Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար	**7145**	1,320.00	1,645.00

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,205,206.80**	**2,971,182.55**
Եկամտատեսակները		**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար	**7145**	1,450.00	1,700.00
Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	**7145**	26,904.00	20,373.00
Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում "Առևտրի և ծառայությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար	**7145**	15,593.00	9,095.75
Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար	**7145**	750.00	1,170.00
Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	**7145**	2,248.00	2,591.00
Ավագանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ-րի (բացառ. Երևան քաղաքի)	**7145**	24,000.00	17,789.38
Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար	**7145**	-	35.00

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,205,206.80**	**2,971,182.55**
Եկամտատեսակները		**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար	**7145**	1,790.00	944.34
Այլ տեղական տուրքեր	**7145**	500.00	1,627.00
Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար	**7146**	9,000.00	9,859.70
Նոտար. գրասենյակների կողմից նոտար. ծառայություն. կատարելու, նոտար. կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար	**7146**	17,000.00	34,010.49
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	**7331**	1,507,795.70	1,507,795.70
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	**7331**	6,767.90	6,767.90
Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	**7332**	486,782.40	167,617.50
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	**7415**	34,100.00	29,170.65
Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	**7415**	6,765.50	11,593.17

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,205,206.80**	**2,971,182.55**
Եկամտատեսակները		**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	**7421**	61,360.90	61,360.90
Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար	**7422**	800.00	1,280.00
Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար	**7422**	2,350.00	1,625.00
Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար	**7422**	7,500.00	14,500.00
Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար	**7422**	5,000.00	15,725.00
Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար	**7422**	199,000.00	179,095.45
Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար	**7422**	149,330.00	150,142.85
Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	**7431**	1,200.00	2,622.82
Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	**7452**	11,957.00	11,636.21

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,205,206.80**	**2,971,182.55**
Եկամտատեսակները		**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	**6130**	21,030.00	16,516.47
Հողի իրացումից մուտքեր	**6410**	120,500.00	206,257.96

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ *ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019թ.*

ԸՆԴԱՄԵՆԸ		**3,472,521.24**	**2,979,770.61**
Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	**NN**	**Տարեկան ճշտված պլան**	**Փաստացի**
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	**4111**	284,677.39	284,675.55
- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	**4112**	15,800.00	15,800.00
-Էներգետիկ ծառայություններ	**4212**	103,620.50	101,543.21
-Կոմունալ ծառայություններ	**4213**	301,236.30	269,842.93
-Կապի ծառայություններ	**4214**	8,914.59	8,617.48
-Ապահովագրական ծախսեր	**4215**	405.00	405.00
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**	2,205.00	2,110.40
-Արտագերատեսչական ծախսեր	**4217**	0,00	0,00
-Ներքին գործուղումներ	**4221**	9,181.00	9,147.20
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	**4222**	2,810.00	2,806.86
-Այլ տրանսպորտային ծախսեր	**4229**	0,00	0,00
-Վարչական ծառայություններ	**4231**	3,023.26	2,884.32
-Համակարգչային ծառայություններ	**4232**	1,200.00	1,178.80
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	**4233**	20.00	15.00
-Տեղակատվական ծառայություններ	**4234**	1,300.00	1,129.95

-Կառավարչական ծառայություններ	**4235**	980.00	980.00
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	**4236**	-	-
-Ներկայացուցչական ծախսեր	**4237**	7,500.00	7,321.40
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	**4239**	101,759.50	95,527.15
-Մասնագիտական ծառայություններ	**4241**	7,118.00	4,110.15
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	**4251**	94,621.00	73,065.23
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	**4252**	2,992.90	2,772.80
-Գրասենյակային նյութեր և հագուստ	**4261**	5,842.74	5,803.51
-Տրանսպորտային նյութեր	**4264**	12,200.00	11,906.00
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	**4267**	2,010.13	1,611.97
-Հատուկ նպատակային այլ նյութեր	**4269**	2,100.00	2,026.21
-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	**4511**	1,385,771.70	1,367,074.87
-Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544+տող 4545 +տող 4546)	**4657**	454.00	450.00
-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	**4727**	16,121.00	15,872.00
-Այլ նպաստներ բյուջեից	**4729**	21,800.00	21,545.05
-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	**4819**	20,400.00	17,053.42
-Պարտադիր վճարներ	**4823**	9,000.00	8,795.36
-Պահուստային միջոցներ	**4891**	19,768.16	-
- Շենքերի և շինությունների կառուցում	**5112**	181,338.60	170,785.43
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	**5113**	715,496.27	363,625.22
- Տրանսպորտային սարքավորումներ	**5121**	91,500.00	82,000.00
- Վարչական սարքավորումներ	**5122**	14,327.20	11,012.14
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	**5129**	13,965.00	8,396.00
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	**5132**	262.00	262.00
- Նախագծահետազոտական ծախսեր	**5134**	10,800.00	7,618.00

I. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի միջև:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 1 կատարողական ակտով ապամոնտաժված նյութերի ընդունում-հանձնում տեղի չի ունեցել Համայնքապետարանի հետ և չի կազմվել պիտանելիության որակի գնահատման և ընդունման-հանձնման վերաբերյալ ակտ: Ստորև ներկայացված են ապամոնտաժված նյութերը՝

ա) Տանիքի ցինկապատ թիթեղ -726.21քառ.մ

բ) Ճակատային /ֆասադային/ ալյումինե ցուցափեղկ -393քառ.մ

գ) Մանրատախտակե հատակների քանդում /2-րդ, 3-րդ հարկեր/-1139 քառ.մ

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ապամոնտաժված ապրանքանյութական արժեքների հետ կապված հսկողության գործընթացների բացակայությունը հանգեցնում է օրենքի պահանջների հետ անհամապատասխանության:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Յուրաքանչյուր կապիտալ բնույթի շինարարական աշխատանքների ադյունքում կազմել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանով սահմանված ՀՄ-13 ձևով նախատեսված Հիմնական միջոցների լուծարման ակտը և դրա արդյունքում առաջացած նյութական արժեքների մուտքագրում:

2. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5112. օբյեկտ՝ Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարում. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի միջև:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1 կատարողական ակտով ապամոնտաժված նյութերի ընդունում-հանձնում տեղի չի ունեցել Համայնքապետարանի հետ և չի կազմվել պիտանելիության որակի գնահատման և ընդունման- հանձնման վերաբերյալ ակտ: Աշխատանքների ընթացքում ապամոնտաժվել է 285 մ մետաղական խողովակներ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ապամոնտաժված ապրանքանյութական արժեքների հետ կապված հսկողության գործընթացների բացակայությունը հանգեցնում է օրենքի պահանջների հետ անհամապատասխանության:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Յուրաքանչյուր կապիտալ բնույթի շինարարական աշխատանքների ադյունքում կազմել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանով սահմանված ՀՄ-13 ձևով նախատեսված Հիմնական միջոցների լուծարման ակտը և դրա արդյունքում առաջացած նյութական արժեքների մուտքագրում:

3. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձոր համայնքի Հալաբյան փողոցի կամրջի արտաքին

լուսավորության ցանցի հրդեհից վնասված հատվածի ապամոնտաժման և վերականգնման աշխատանքներ. Ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի միջև:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի փետրվարի 26-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ ՄԱ ԱՇՁԲ19/28 պայմանագիրը Համայնքապետարանի և «Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ -ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 925.00 հազ. դրամ:

Պայմանագրով նախատեսվել է Վանաձոր համայնքի Հալաբյան փողոցի կամրջի արտաքին լուսավորության ցանցի հրդեհից վնասված հատվածի ապամոնտաժման և վերականգնման աշխատանքների կատարում:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ-ի կողմից թիվ 1 կատարողական ակտով ապամոնտաժված նյութերի ընդունում-հանձնում տեղի չի ունեցել Համայնքապետարանի հետ և չի կազմվել պիտանելիության որակի գնահատման և ընդունման-հանձնման վերաբերյալ ակտ: Ստորև ներկայացված են ապամոնտաժված նյութերը՝

ա) Պողպատե հենասյուներ Ֆ-100մմ/ 9հատ/- 450 կգ

բ) Ալյումինե ջղերով մալուխ /ԱՎՎԳ416մմ2/ - 80 մետր

գ) Հաղորդալար 116մմ2 - 450մետր

դ) Ալյումինե ջղերով հաղորդալար /ԱՊՎ 14մմ2/- 65 մետր

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ապամոնտաժված ապրանքանյութական արժեքների հետ կապված հսկողության գործընթացների բացակայությունը հանգեցնում է օրենքի պահանջների հետ անհամապատասխանության:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Յուրաքանչյուր կապիտալ բնույթի շինարարական աշխատանքների ադյունքում կազմել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների

փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանով սահմանված ՀՄ-13 ձևով նախատեսված Հիմնական միջոցների լուծարման ակտը և դրա արդյունքում առաջացած նյութական արժեքների մուտքագրում:

4. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. ապամոնտաժված նյութերի ընդունման-հանձնման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանի 1.16 կետի միջև:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «Գունաշեն» ՍՊԸ -ի կողմից անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման աշխատանքների ընթացքում ապամոնտաժված մետաղի համար չի կազմվել պիտանելիության որակի գնահատման և ընդունման- հանձնման վերաբերյալ ակտ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ապամոնտաժված ապրանքանյութական արժեքների հետ կապված հսկողության գործընթացների բացակայությունը հանգեցնում է օրենքի պահանջների հետ անհամապատասխանության:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Յուրաքանչյուր կապիտալ բնույթի շինարարական աշխատանքների ադյունքում կազմել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի մարտի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 142-Ա հրամանով սահմանված ՀՄ-13 ձևով նախատեսված Հիմնական միջոցների լուծարման ակտը և դրա արդյունքում առաջացած նյութական արժեքների մուտքագրում:

5. Կոմունալ ծառայությունների գծով 2019 թվականի ընթացքում նախատեսված և փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն համայնքի ավագանու կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշմամբ հաստատված սխեմայի պահանջների հետ: Ըստ հաստատված սխեմայի սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունները բաժանվել են վեց գոտիների, սակայն փաստացի 2019 թվականի ընթացքում համայնքում իրականացվող սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունները փաստացի իրականացվել են յոթ գոտիական բաժանմամբ:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ կետի մասով: Սանիտարական մաքրման սխեմայում ներառված, փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացում աշխատանքները չի իրականացվել:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով: Համայնքի ավագանու կողմից 2019թ-ի համար հաստատված սխեմայում բացակայում են համայնքում առաջացող կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի ծավալների մոտավոր հաշվարկը և անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով: 2019թ-ին համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել, օգտագործման ու վերամշակման համար պայմաններ չեն ստեղծվել, որոնք կնվազեցնեն աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները:

Վերոնշյալ անհամապատասխանությունները, ինչպես նաև սույն ընթացիկ եզրակացության 6-րդ և 7-րդ կետերում ներկայացված անհամապատասխանությունները հանգեցրել են ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման 251,505,90 հազ.դրամ գումարով

Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեով՝ «Կոմունալ ծառայություններ» հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 301,236.30 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 269,842.90 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է կոմունալ ծառայությունների գծով նախատեսված և կատարված ծախսերն ըստ ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 1 հազ.դրամ

Հ/Հ	Ծախսերն ըստ ուղղությունների	Ճշտված պլան	Փաստացի
1	**Աղբահանություն և սանիտարական մաքրում, այդ թվում**	**281,419.30**	**264,959.20**
1.1	Ընթացիկ տարի	267,966.00	251,505.90
1.2	Նախորդ տարիների պարտքի մարում	13,453.00	13,453.30
2	**Դեռատիզացիայի և ջրմուղ կոյուղու ծախսեր**	**2,600.00**	**2,206.50**
3	**Ժամանակավոր տնակների ապամոնտաժում և շենքերի պատերի մաքրման աշխատանքներ**	**17,217.00**	**2,677.20**
	Ընդամենը	**301,236.30**	**269,842.90**

Ստորև աղյուսակում ներկայացվում է աղբահանության և սանիտարական մաքրման գծով ծախսերն ըստ ուղղությունների՝

Աղյուսակ 2 , հազ.դրամ

Հ/Հ	Ծախսերն ըստ ուղղությունների	Ճշտված պլան		Փաստացի	
		Ընթացիկ տարի	Նախորդ տարիների պարտքի մարում	Ընթացիկ տարի	Նախորդ տարիների պարտքի մարում
1	Կենցաղային աղբահանություն	190,000.00	8,916.80	181,810.50	8,916.80
2	Փողոցների սանիտարական մաքրում	54,000.00	2,635.70	52,783.00	2,635.70
3	Խոշոր եզրաչափի աղբի տեղափոխում	10,980.00	420.00	10,442.40	420.00
4	Փողոցների ձմեռային պաշտպանություն	8,000.00	1,480.80	2,368.70	1,480.80
5	ՊՆ զորամասի աղբահանություն	3,000.00	-	2,177.10	-
6	Շաբաթօրյակների կազմակերպում	1,986.00	-	1,924.20	-
	Ընդամենը	**267,966.00**	**13,453.30**	**251,505.90**	**13,453.30**

Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ աղբահանությունը բնակավայրերում գոյացող աղբի հավաքումը, պահումը, փոխադրումը և աղբավայրում տեղադրումն է, իսկ սանիտարական մաքրումը համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, բակերի, մայթերի

և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումն է աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանին հաստատում է սանիտարական մաքրման սխեմա, որը պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

Վանաձոր համայնքի ավագանու կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշմամբ հաստատված սանիտարական մաքրման սխեման գործել է 2019 թվականի ընթացքում: Համաձայն հաստատված սխեմայի՝ սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունները բաժանվել են վեց գոտիների, սակայն, 2019 թվականի ընթացքում, համայնքում իրականացվող սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունները փաստացի իրականացվել են յոթ գոտիական բաժանմամբ: Ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված պարզաբանման, 7-րդ գոտին առաջացել է առաջին գոտու ծանրաբեռված լինելու հանգամանքով՝ այն բաժանվել է 1-ին և 7-րդ գոտիների: Առկա է անհամապատասխանություն համայնքի ավագանու կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշմամբ հաստատված սխեմայի պահանջների հետ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններն գոտիական բաժանումներով՝ ըստ մակերեսների և ծավալների

Աղյուսակ 3, հազ.դրամ

Գոտի	Թաղամասեր	Մաքրվող մակերեսը /քմ օրական/	Տեղափոխվող աղբի քանակությունը /տոննա տարեկան/
I	Թագավորանիստ, Բազում, ՈՒսանողական	41,685	4,698.5
II	Խանդակ, Խնձորուտ	36,110	4,193.5
III	Կենտրոն, Ցալկուտ, Ջուխտ ախպուր	75,880	6,550.9
IV	Վանաձոր	33,328	2,390.6
V	Քիմշին	55,570	2,585.8
VI	Տավրոս, Տարոն, աջափնյա, Առդա	71,150	5,042.5
VII	Համբարձումյան փողոց	7,200	2,013.6
	Ընդամենը	**320,923**	**27,475.4**

Այսպիսով, Վանաձոր քաղաքի փողոցների օրական սանիտարական մաքրման մակերեսը կազմել է 320,923 քմ, տարեկան այն կկազմի՝ 117,136,895 քմ: Ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված 2019 թվականի սանիտարական մաքրման ենթակա փողոցների ցանկի, փողոցների մաքրվող լայնությունը կազմել է 4-ից մինչև 10 մետր: Մաքրվող մակերեսների մեջ չի առանձնացվել ճանապարհի երթևեկելի մասը, մայթերի և սիզամարգերի մաքրվող մակերեսները, ինչպես նաև մաքրման հաճախականությունները, հետևաբար սանիտարական մաքրման սխեմայում առկա է անհամապատասխանություն՝ կապված օրական մաքրվող մակերեսների հետ: Հաշվեքննության ընթացքում հաշվեքննիչ պալատի՝ 18.02.2021 թվականի թիվ 38 գրությամբ, Վանաձորի համայնքապետարանից պահանջվել է տրամադրել համայնքի ավագանու կողմից հաստատված սանիտարական մաքրման սխեմայի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ 02.03.2021 թվականի թիվ 01/2606 գրությամբ տրամադրված տեղեկատվության՝ 2019 թվականի տարեվերջին համայնքի ավագանու կողմից հաստատվել է սանիտարական մաքրման սխեման՝ յոթ գոտիական բաժանումներով, սակայն սանիտարական մաքրման վերը նշված տարանջատումը չի կատարված:

Համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնից պահանջվեց համայնքի սանիտարական մաքրում իրականացվող փողոցների մայթերի և սիզամարգերի մակերեսների վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ տրամադրված տեղեկատվության, սանիտարական մաքրում իրականացվող փողոցների մայթերի մակերեսները կազմում են 212,219 քմ, սիզամարգերինը՝ 36,835 քմ:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համաձայն, 2019 թվականի ընթացքում համայնքապետարանը պետք է

իրականացներ փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացում աշխատանքներ: Նշված ծառայությունը համայնքապետարանի կողմից չի իրականացվել և չի ներառվել սանիտարական մաքրման սխեմայում: Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ կետի մասով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համաձայն, համայնքի ավագանին պետք է հաստատի համայնքում առաջացող կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի ծավալների մոտավոր հաշվարկը և անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները: 2019թ-ի համար հաստատված սխեմայում բացակայում է նշված հաշվարկները և մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները: Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով:

Համաձայն Համայնքապետարանի գլխավոր ճարտարապետի կողմից հաստատված 2019 թվականի կենցաղային աղբահանության համար կազմված նախահաշիվների կենցաղային աղբահանության տարեկան աղբի քանակությունների՝ մոտավոր հաշվարկները կատարվել են քաղաքի ազգաբնակչության թվից և իրավաբանական անձանց կողմից արտադրված աղբի քանակներից ելնելով: Հաշվարկներում քաղաքի ազգաբնակչության թիվը ընդունվել է 83,800 մարդ, որն ըստ ներկայացված պարզաբանման՝ համայնքում փաստացի և ժամանակավոր բնակվող մարդկանց թիվն է: Ըստ ներկայացված հաշվարկների կենցաղային աղբահանության տարեկան աղբի քանակությունը հաշվարկվել է 27,475.4 տոննա: 2019 թվականի ընթացքում օպերատորների կողմից համայնքապետարան ներկայացված կատարողական ակտերով աղբավայր է տեղափոխվել նույն քանակության կենցաղային աղբ, ընդ որում նշված աղբի քանակությունը օպերատորների կողմից բաժանվել է 12 հավասար մասերի և յուրաքանչյուր ամիս ներկայացվել է կատարողական ակտ այդ մասերի չափով: Հաշվեքննության ընթացքում համայնքապետարանից պահանջվել է օպերատորների կողմից կենցաղային աղբավայր տեղափոխված աղբի քանակների և կատարված երթերի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ ստացված տեղեկատվության՝ պարզվել է, որ միևնույն տարողությամբ մեքենաների համար տարբեր օպերատորների մոտ հաշվարկվել է տարբեր ծավալների և քաշի աղբի բարձում և տեղափոխում կենցաղային աղբավայր, չնայած այն բանի, որ որևէ անգամ աղբի ծավալների կամ կշռի չափումներ չի կատարվել ոչ օպերատորների, ոչ էլ համայնքապետարանի կողմից:

2019թ-ին համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել, օգտագործման ու վերամշակման համար պայմաններ չեն ստեղծվել, որոնք կնվազեցնեն աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները: Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն համայնքի ավագանու կողմից 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշմամբ հաստատված սխեմայի պահանջների հետ: Ըստ հաստատված սխեմայի սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունները բաժանվել են վեց գոտիների, սակայն փաստացի 2019 թվականի ընթացքում համայնքում իրականացվող սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունները փաստացի իրականացվել են յոթ գոտիական բաժանմամբ:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ կետի մասով: Սանիտարական մաքրման սխեմայում ներառված, փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացում աշխատանքները չի իրականացվել:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով: Համայնքի ավագանու կողմից 2019թ-ի համար հաստատված սխեմայում բացակայում են համայնքում առաջացող կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի ծավալների մոտավոր հաշվարկը և անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները: Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասով: 2019թ-ին համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել, օգտագործման ու վերամշակման համար պայմաններ չեն ստեղծվել, որոնք կնվազեցնեն աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Հաստատել աղբահանության և սանիտարական մաքրման նոր սխեմա՝ սխեմայում ներառելով մանրամասների վերաբերյալ հաշվարկներ:

6. ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ.-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի մասով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի հետ, այն է՝ աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ախտահանվում աղբաթափման վայրում, աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով:

ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ-ի թիվ 25-Ն հրամանով հաստատվել է «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջների թիվ 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը»: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման ընթացքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝ կապված վերը նշված հրամանի հետ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ համայնքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման ընթացքում չի պահպանվել առողջապահության նախարարի վերը նշված հրամանի հետևյալ պահանջները.

1. Աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 11),
2. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ախտահանվում աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից՝ քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետասիլիկատի (1-3%) ախտահանիչ լուծույթներով (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 19),
3. Աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու

սարքավորումներ, տեխնիկական ջրի պահուստային տարողություն (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 22),

4. Աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 34-8),

Պետք է նշել, որ կենցաղային թափոնների աղբավայրը, որը գտնվում է Արջուտ գյուղում, սեփականության իրավունքով պատկանում է «Վանաձորի սանմաքրում» ԲԲԸ-ին:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանության ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի հետ, այն է՝ աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ախտահանվում աղբաթափման վայրում, աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Սանիտարական կանոնները և նորմերը պահպանելու համար, աղբահավաքման կոնտեյներները ապահովել կափարիչներով, աղբաթափման վայրում ախտահանել աղբատար փոխադրամիջոցների թափքերը:

7. Սահմանված կարգով ընտրված օպերատորների կողմից 2019թ-ի ընթացքում կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պայմանագրերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների հետ. սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններ մատուցող օպերատորներն աղբարկղերն ամիսը մեկ անգամ չեն ախտահանել հատուկ նյութերով, մեքենաները աղբավայր մեկնելուց հետո չեն ենթարկվել ախտահանիչ միջոցներով լվացման, աղբը չի տեղադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրում և այլն:

2019 թվականի ընթացքում համայնքում՝ կատարվելիք աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող ընտրված՝ թվով 5 օպերատորների հետ կնքվել է 243,840.00 հազ. դրամի պայմանագիր, որի դիմաց ներկայացվել են նույն գումարի չափով կատարողական ակտեր: 2019 թվականին ընթացքում՝ կատարված տվյալ աշխատանքների համար, օպերատորներին վճարվել է 234,593.60 հազ. դրամ կամ տվյալ տարվա համար կատարված աշխատանքերի համար համայնքապետարանի կողմից օպերատորներին պակաս է վճարվել 9,246.40 հազ. դրամ, որը ձևակերպվել է որպես կրեդիտորական պարտք:

Ստորև աղյուսակում ներկայացվում է համայնքապետարանի կողմից՝ կնքված պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները և դրանց դիմաց իրականացված վճարումները:

Աղյուսակ 4, հազ. դրամ

Գոտի	***Կազմակերպության անվանումը***	***Պայմանագրային գումարը***	***Ներկայացված կատարողական աշխատանքների գումարը***	***Վճարված գումարը***	***2019թ-ի ընթացքում պակաս վճարված գումարը***
I	Է.Էդարյան ՍՊԸ	44,320.00	44,320.00	43,006.10	1,313.90
II	Պագամի ՍՊԸ	42,750.00	42,750.00	39,137.70	3,612.30
III	Վանաձորի Սանմաքրում ՍՊԸ	53,180.00	53,180.00	52,535.70	644.30
IV և VII	Էկովան ՍՊԸ	40,200.00	40,200.00	39,009.40	1,190.60
V	Գարիկ Ղափանյան ՍՊԸ	25,700.00	25,700.00	24,639.90	1,060.10
VI	Ա.Մկրտչյան ՍՊԸ	37,690.00	37,690.00	36,264.80	1,425.20
	Ընդամենը	***243,840.00***	***243,840.00***	***234,593.60***	***9,246.40***

Պետք է նշել, որ պայմանագրի անբաժանելի մասը կազմող գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանվել են սանիտարական մաքրմանը և աղբահանությանը ուղղված պահանջները, որոնք ոչ ամբողջությամբ են իրականացվել ծառայությունները մատուցող օպերատորների կողմից, օրինակ՝ աղբարկղերը ամիսը մեկ անգամ չի ախտահանվել հատուկ նյութերով, մեքենաները աղբավայր մեկնելուց հետո չի ենթարկվել ախտահանիչ միջոցներով լվացման, աղբը չի տեղադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրում և այլն: Պայմանագրով ամրագրված պահանջների չկատարումը հիմնականում պայմանավորված է աղբավայրի հնարավորություններով:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պայմանագրերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջների հետ. սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններ մատուցող օպերատորներն աղբարկղներն ամիսը մեկ անգամ չեն ախտահանել հատուկ նյութերով, մեքենաները աղբավայր մեկնելուց հետո չեն ենթարկվել ախտահանիչ միջոցներով լվացման, աղբը չի տեղադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրում և այլն:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Պայմանագրին կից տեխնիկական բնութագրում ներառել սանիտարական մաքրման սխեմայում ընդգրկված ամբողջ աշխատանքների տեխնիկական պահանջները, մասնավորապես՝ ճանապարհների ավլման և լվացման աշխատանքները, սիզամարգերից աղբի հավաքման հետ կապված խնդիրները և այլն:

8. «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի պահանջների հետ: Գնման առարկայի հատկանիշները պարունակել են պահանջ կամ հղում պարունակող կոնկրետ մոդելին և կոնկրետ աղբյուրին, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրերը չեն պարունակել «կամ համարժեք» բառերը: Չեն ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնում և հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար:

Համայնքի կարիքների համար, 2019 թվականի ֆոնդային բյուջեի 5121 «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով, նախատեսվել է 91,500.00 հազ.դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 82,000.00 հազ. դրամ: Ձեռք է բերվել երկու հատ ԿԱՄԱՅ – 43253-3010-28 մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա բազմաֆունկցիոնալ կոմբինացված ԿՕ-806 ավտոմեքենաներ, յուրաքանչյուրը՝ 41,000.00 հազ դրամ արժեքով, ընդամենը՝ 82,000.00 հազ. դրամի:

ՀՀԼՄՎՔ ԲՄ ԱՊՁԲ - 19/72 ծածկագրով բաց մրցույթի գնման առաջարկի փաթեթների հաշվեքննությամբ պարզվել է, որ գնահատող հանձնաժողովի 08.08.2019թ կազմված 2-րդ արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովը ընդունել է ի գիտություն, որ հայտեր են ներկայացրել 3 կազմակերպություններ:

Աղյուսակով ներկայացվում է մրցույթին մասնակիցների կազմակերպությունները և իրենց գնային առաջարկները՝ առանց ԱԱՀ՝

Աղյուսակ 5, հազ. դրամ

Հ/Հ	Գնման առարկան	Հայտ ներկայացված կազմակերպության անվանում	Գնային առաջարկ հազ. դրամ	Հաղթող կազմակերպություն	Պայմանագրի գին հազ. դրամ
1	Բազմաֆունկցիոնալ կոմբինացված ԿՕ - 806 ավտոմեքենա	«Լենդրուշ Մոտորս» ՍՊԸ	71,666.70		
		«ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ	68,333.30	«ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ	68,333.30
		«Ekopol engineering» ՍՊԸ	104,986.60		
	Ընդամենը				**68,333.30**

ԿԱՄԱԶ Արմենիա» ՓԲԸ-ն համարվել է մրցույթի հաղթող և 24.09.2019թ-ին կնքվել է ԿԱՄԱՅ – 43253-3010-28 մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա բազմաֆունկցիոնալ կոմբինացված ԿՕ-806 ավտոմեքենաների ձեռքբերման համար պայմանագիր, որի գինը կազմել է 82.000.00 հազ.դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Պարզվել է նաև, որ Վանաձորի քաղաքապետարանում կազմակերպված ՀՀԼՄՎՔ ԲՄ ԱՊՁԲ - 19/72 ծածկագրով բաց մրցույթի գնման հայտով, համապատասխան ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշները ամբողջությամբ չեն բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներից և պահանջներից: Այսպես՝ բազմաֆունկցիոնալ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով կոնկրետ ԿԱՄԱՅ – 43253-3010-28 մակնիշի ավտոմեքենայի բազային տվյալները, իսկ որպես բազմաֆունկցիոնալ ավտոմեքենայի՝ տեխնիկական տվյալները ամբողջությամբ ներկայացված են կոնկրետ ԿՕ-806-մոդելին բնութագրող հատկանիշները:[1]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

[1] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ :

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի պահանջների հետ: Գնման առարկայի հատկանիշները պարունակել են պահանջ կամ հղում պարունակող կոնկրետ մոդելին և կոնկրետ աղբյուրին, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրերը չեն պարունակել «կամ համարժեք» բառերը: Չեն ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնում և հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար: Արդյունքում, բազմաֆունկցիոնալ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով ԿԱՄԱՅ– 43253-3010-28 մակնիշի ավտոմեքենայի բազային տվյալները, իսկ որպես բազմաֆունկցիոնալ ավտոմեքենայի՝ տեխնիկական տվյալները ամբողջությամբ ներկայացված են կոնկրետ ԿՕ-806-մոդելին բնութագրող հատկանիշները և ձեռք է բերվել տվյալ տրանսպորտային միջոցը:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Համայնքի բյուջեի սահմաններում, տրանսպորտային պարկը համալրել նոր բազմաֆունկցիոնալ ավտոմեքենաներով, քանի որ սանիտարական մաքրման սխեմային համաձայն համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման ծախսերը հնարավոր է նվազեցնել միայն ձեռք բերվող նոր բազմաֆունկցիոնալ ավտոմեքենաների հաշվին:

9. Համայնքապետարանի կարիքների համար կատարված գնումների վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Համայնքապետարանի 5122 տնտեսագիտական դասակարգման հոդվածով /վարչական սարքավորումներ/ կատարված գնումների ընդհանուր գումարը կազմում է 11,012.14 դրամ:

ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՊՁԲ 19/82, ՀՀ ԼՄՎՔ ՄԱԱՇՁԲ 19/102 ծածկագրերով առանձին չափաբաժիններով գնումների արդյունքում Համայնքապետարանի կարիքների համար ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա՝ համակարգիչ /աշխատանքային/ 2,545.35 հազ.դրամ արժողությամբ և տեսախցիկ 609.00 հազ. դրամ արժողությամբ, որոնց տեխնիկական բնութագրերում նշված է եղել ծագման երկիրը /Չինաստան/, ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջներին:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ: Այն է՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

10. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. Գնումների պլանավորման վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՈԱԿ-ների գնումների պլանավորման գործընթացի և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետի (բ) պարբերությամբ սահմանված գործընթացի միջև:

Համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում գնումների պլանավորումը իրականացվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ կետով սահմանված կարգը, այն է՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է: ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետի (բ) պարբերությամբ սահմանվում է, որ, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով ՀՈԱԿ-ների կողմից 2018թ. ձեռք բերված որոշ ապրանքների գները և համադրելով դրանք 2019 թվականի համար

գնման հայտով ներկայացված գների հետ, պարզվում է, որ գնման հայտով նախատեսվել են ավելի բարձր գներ, քան ձեռք են բերվել 2018 թվականին: Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են այն ապրանքների վերլուծության արդյունքները, որոնց գնային տարբերությունները առավել մեծ են՝

Աղյուսակ 6 ,դրամ

Ապրանք	2018թ. ձեռք բերման գներ		2019թ. Հայտ		Միջին գների տարբերություն
	Նվազագույն-առավելագույն	Միջին գին	Նվազագույն-առավելագույն	Միջին գին	
Կաղամբ,կգ	105-120	165	150-400	350	185
Կարտոֆիլ, կգ	180-450	315	300-550	425	110
Տավարի 1-ին կարգի,կգ	-	3800	-	4700	900
Տավարի 2-րդ կարգի,կգ	2900-3400	3150	3500-4300	4400	1250
Հավի կրծքամիս,կգ	1800-2500	2150	2500-2650	2575	425
Հավի միս,կգ	1300-1500	1400	1500-1700	1600	200
Թթվասեր 20%, տուփ	330-640	485	520-580	550	65
Կարագ սերուցքային,կգ	3100-4500	3800	4250-4700	4475	675
Յուղ հալած,կգ	1550-2300	1925	1800-2400	2100	175
Յուղ Բուսական, լ	600-750	675	650-960	805	130
Վարունգ,կգ	350-600	475	500-900	700	225
Լոլիկ,կգ	450-800	625	500-900	700	75
Մածուն,լ	225-500	362	450-550	500	138
Կաթնաշոռ	320-550	435	450-520	485	50
Մանդարին	350-500	425	500-620	560	135
Ծիրան	300-450	375	400-480	440	65
Ջեմ	1200-1400	1300	1400-1800	1600	300

Նշենք, որ գնման հայտերում ավելի բարձր գներ սահմանելու համար որևէ հիմնավորում առկա չէ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՈԱԿ-ների գնումների պլանավորման գործընթացի և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի

կարգի կազմակերպման» թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 2-րդ ենթակետի (բ) պարբերությամբ սահմանված գործընթացի միջև:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Վանաձորի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ նախահաշվային գների որոշման միասնական սկզբունք սահմանելու և այդ սկզբունքների հիման վրա միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքների համար միասնական գին սահմանելու նպատակով:

11. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. Կազմակերպված մրցույթների ընթացակարգի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի հետ:

Համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում գնումները իրականացվել են գնանշման հարցման ընթացակարգով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է, որ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ: Սակայն, հաշվեքննության ընթացքում՝ ուսումնասիրելով ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված մրցույթների փաթեթները, պարզվել է, որ համաձայն կազմված արձանագրությունների՝ որևէ ՀՈԱԿ-ում մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հնարավոր կլիներ բանակցություններ վարելու պարագայում ձևավորել որոշակի խնայողություններ:

12.ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների անհամապատասխանության վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանի պահանջների հետ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են նաև Վանաձոր համայնքի ավագանու որոշմամբ հաստատված կրթական ՀՈԱԿ-ների հաստիքացուցակները, դրանք համեմատելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանի պահանջների հետ: Մասնավորապես՝ որոշ մանկապարտեզների հաստիքացուցակներում դաստիրակի, բուժքույրի, տնտեսվարի, դաստիրակի օգնականի, գործավարի, սանիտար դայակի, դերձակի հաստիքները սահմանված են ավելին, քան սահմանված է նախարարի հրամանով հաստատված օրինակելի հաստիքացուցակից, իսկ որոշ ՀՈԱԿ-ներում գործավարի հաստիքները սահմանված են եղել ավելի քիչ:[2]

Հաշվի առնելով վերոգրյալը, պարզ է դառնում, որ հաստիքների ոչ համապատասխան սահմանվելու պարագայում սխալ է պլանավորվել նաև ՀՈԱԿ-ների աշխատավարձի ֆոնդը՝

[2]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ:

Աղյուսակ 7, հազ.դրամ

Հ/հ	Կազմակերպության անվանում	Պլանավորումը ըստ գործող հաստիքացուցակի	Պլանավորումը ըստ նախարարի հրամանի	Տարբերություն	2019թ. Փաստացի ծախս	Տարբերություն
Ա	Բ	Գ	Դ	Ե=Գ-Դ	Զ	Է=Դ-Զ
1	«Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	17,396.10	15,357.10	2,039.00	17,587.70	(2,230.60)
2	«Վանաձոր համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	9,323.20	8,855.80	467.40	10,094.60	(1,238.80)
3	«Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	8,813.60	8,377.20	436.40	9,375.60	(998.40)
4	«Վանաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	24,476.70	20,957.70	3,519.00	23,611.80	(2,654.10)
5	«Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	9,925.60	9,458.20	467.40	10,542.10	(1,083.90)
6	«Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	22,633.90	20,841.10	1,792.80	24,177.50	(3,336.40)
7	«Վանաձոր համայնքի թիվ 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ	9,635.40	9,359.40	276.00	10,435.00	(1,075.60)
8	«Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	14,947.30	15,702.10	(754.80)	14,670.80	1,031.30
9	«Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» ՀՈԱԿ	22,509.00	23,772.00	(1,263.00)	17,611.40	6,160.60
10	«Վանաձոր համայնքի Մարգարիտ Մատինյանի Թիվ 19 մանկապարտեզ»	14,854.60	15,172.90	(318.30)	15,149.70	23.20

	ՀՈԱԿ					
11	«Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ	19,005.60	17,456.70	1,548.90	19,629.50	(2,172.80)
12	«Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13,408.50	11,977.80	1,430.70	14,545.00	(2,567.20)
13	«Վանաձոր համայնքի թիվ 30 մանկապարտեզ» ՀՈԱԿ	18,968.40	17,611.20	1,357.20	20,508.60	(2,897.40)
14	«Վանաձոր համայնքի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ	16,732.00	15,141.10	1,590.90	17,908.00	(2,766.90)
15	«Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ	9,937.00	9,195.40	741.60	10,247.10	(1,051.70)
16	«Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» ՀՈԱԿ	19,401.20	17,079.40	2,321.80	19,501.70	(2,422.30)
17	«Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ	12,123.60	9,439.10	2,684.50	10,230.40	(791.30)
18	«Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» ՀՈԱԿ	16,872.00	16,184.10	687.90	17,733.20	(1,549.10)
19	«Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզ» ՀՈԱԿ	10,375.20	9,453.60	921.60	11,299.00	(1,845.40)
20	«Վանաձոր համայնքի թիվ 41 մանկապարտեզ» ՀՈԱԿ	10,261.40	8,997.80	1,263.60	10,915.00	(1,917.20)
	Ընդամենը	**301,600.30**	**280,389.70**	**21,210.60**	**305,773.70**	**(25,384.00)**

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել

Եզրակացություն

ՀՀ Վանաձոր համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում՝ հաստիքները ավելին սահմանելու արդյունքում, ավել է պլանավորվել նաև ՀՈԱԿ-ների տարեկան աշխատավարձի ֆոնդը:

13. Հողի հարկի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի մասով, այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»: Ֆիզիկական անձանց հողի հարկի 2019թ. շտեմարանում առկա են անճշտություններ:

Համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի հարկի բազաների ուսումնասիրության, հարկերի հավաքագրման, հողի հարկի տարեկան հաշվարկային ցուցանիշների, նախատեսվածի ու փաստացի կատարվածի և բյուջե չվճարված գումարների վերլուծության արդյունքները ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 8, հազ. դրամ

Հարկ վճարող	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 31.12.2017թ. դրությամբ	2019թ. Հողի հարկ		Ենթակա է վճարման 31.12.2017թ. դրությամբ	Ենթակա է վճարման 31.12.2019թ. դրությամբ
		պլան	փաստ		
Ֆիզիկական անձ	24,395.50	23,238.60	23,685.80	75,724.50	90,993.40
Իրավաբանական անձ	16,870.90	11,000.00	8,317.30	52,936.40	74,314.10
Ընդամենը	**41,266.40**	**34,238.60**	**32,003.10**	**128,660.90**	**165,307.50**

Համայնքի 2019թ. բյուջեի ֆիզիկական անձանց հողի հարկի բարձր կատարողականը պայմանավորված է համայնքապետարանի կողմից տարեկան բյուջեի ոչ լիարժեք պլանավորմամբ և իրական ապառքների գումարները նախատեսված պլաններում չներառմամբ: Համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի պահանջը, այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը

նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 01.07.2019թ. համայնքի հողամասերի և դրանց գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ձևով տրամադրվել է Համայնքապետարանին: Նշված տեղեկատվության հիման վրա Համայնքապետարանի կողմից կատարվել են ճշտման որոշակի աշխատանքներ, սակայն հաշվեքննության ընթացքում հայտնաբերվել են տարբերություններ.[3]

Այսպես՝ ֆիզիկական անձանց պատկանող հողակտորների քանակը Համայնքապետարանի տվյալների շտեմարանում կազմել է՝ 13,015 հողակտոր, իսկ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ Կոմիտե) տվյալների շտեմարանում՝ 11,986 հողակտոր: Տարբերությունը կազմել է՝ 1,029 հողակտոր, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում Կոմիտեի տվյալների շտեմարանում հողը հաշվառված է մի տողով,իսկ Համայնքապետարանի տվյալների շտեմարանում հիմնականում տարանջատված է ըստ սեփականատերերի:
2. 2006թ.-ին՝ քաղաքի վարչական սահմանների ճշտման արդյունքում, Դարպաս համայնքից փոխանցված հողերի զգալի մասը Կոմիտեի տվյալների շտեմարանում բացակայում են:
3. Կոմիտեի տվյալների շտեմարանում կան բնակելի տներ, որոնց միայն շինությունն է հաշվառված, իսկ Համայնքապետարանի տվյալների շտեմարանում գրանցված է և շինությունը, և նրա զբաղեցրած հողատարածքը:
4. Համայնքապետարանի տվյալների շտեմարանում կան նաև կրկնակի գրանցված հողեր, որոնց անվանափոխության կամ օտարման վերաբերյալ ընթացիկ տեղեկատվություն Կոմիտեի կողմից չի տրվել: Սակայն՝ 01.07.2019թ-ին համայնքին տրամադրված, հողամասերի և դրանց գնահատումների վերաբերյալ տեղեկատվության տվյալների շտեմարանից դուրս են մնացել:

---

[3] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ:

Իրավաբանական անձանց հողերի քանակը Կոմիտեի տվյալների շտեմարանում կազմել է 1,008 է, իսկ Համայնքապետարանի տվյալների շտեմարանում այն 792 հողակտոր է: Տարբերությունը կազմել է 216 հողակտոր, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. Համայնքապետարանի տվյալների շտեմարանում «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին պատկանող 200-ից ավելի ենթակայանները և որոշ կազմակերպությունների հողեր /նույն հասցեում գտնվող/ հաշվառված են մի տողով:

2. Միաժամանակ Կոմիտեի տվյալների շտեմարանում առկա են լուծարված կազմակերպություններին պատկանող, ժամանակավոր օգտագործման տրամադրված հողեր (կազմակերպությունները համարվում են հողի հարկ վճարողներ), որոնք կազմակերպությունների լուծարումից հետո վերադարձվել են սեփականատիրոջը՝ համայնքին: Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով ֆիզիկական անձանց հողի հարկի 2019թ. շտեմարանում հայտնաբերվել են տարբեր տեսակի անճշտություններ, դրանք են՝ համայնքի հողի հարկի շտեմարանում չհաշվառված հողեր և անվանափոխություն չկատարած հողակտորներ, Կոմիտեի շտեմարանում նախկին սեփականատիրոջ անունով հողեր և շտեմարանում չհաշվառված հողեր:[4]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի պահանջը, այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»: Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով ֆիզիկական անձանց հողի հարկի 2019թ. շտեմարանում հայտնաբերվել են անճշտություններ՝ համայնքի հողի հարկի շտեմարանում չհաշվառված հողեր, անվանափոխություն

[4] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ :

չկատարած հողակտորներ, Կոմիտեի շտեմարանում՝ նախկին սեփականատիրոջ անունով հողեր և շտեմարանում չհաշվառված հողեր:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

1. Համայնքի բյուջեի հողի հարկը պլանավորելիս հաշվի առնելով ապառքները և տարեկան հաշվարկային ցուցանիշները:
2. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ կատարել համայնքի հողի հարկի շտեմարանի ճշտումներ, հայտնաբերել և գրանցել չհաշվառված հողակտորները, կատարել անվանափոխություններ:

14. Գույքահարկի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի մասով այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ» և ֆիզիկական անձանց գույքահարկի 2019թ. շտեմարանում առկա են անճշտություններ:

Համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկի բազաների ուսումնասիրության, հարկերի հավաքագրման, գույքահարկի տարեկան հաշվարկային ցուցանիշների, նախատեսվածի ու փաստացի կատարվածի և բյուջե չվճարված գումարների վերլուծության արդյունքները ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 9, հազ.դրամ

Հարկ վճարող	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 31.12.2017թ դրությամբ	2019թ. Գույքահարկ		Ենթակա է վճարման 31.12.2017թդ դրությամբ	Ենթակա է վճարման 31.12.2019թ. դրությամբ
		պլան	փաստ		
Ֆիզիկական անձ	318,629.90	387,774.40	389,334.47	366,903.60	707,749.30
Իրավաբանական անձ	62,912.90	53,019.40	56,484.90	138,617.10	175,700.10
Ընդամենը	**381,542.80**	**440,793.80**	**445,819.40**	**505,520.70**	**883,449.40**

Հարկ է նշել որ, համայնքի ֆիզիկական անձանց պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի 2019թ. բազայում առկա են օտարերկրյա

քաղաքացիների սեփականություն հանդիսացող 7499 ավտոմեքենա, որոնք առաջացել են ԵԱՏՄ երկրների /հիմնականում Ղազախստան/ քաղաքացիների կողմից՝ ժամանակավոր գրանցում ստանալով համայնքում, օտարերկրացու անունով՝ որպես սեփականություն գրանցելով և իրենց հետ իրենց երկիր տանելով: Նշված փոխադրամիջոցների տարեկան գույքահարկի գումարը կազմում է՝ 124,829.1 հազ. դրամ, իսկ համայնքի բյուջեի պարտքը 31.12.2019թ. դրությամբ կազմում է՝ 152,208.4 հազ. դրամ: Նշված հատկանիշներով հարկատուները Համայնքապետարանի կողմից կարող են համարվել ռիսկային և համայնքի բյուջեի նկատմամբ պարտքը՝ անհուսալի:

Համայնքի 2019թ. բյուջեների գույքահարկի բարձր կատարողականը պայմանավորված է համայնքապետարանի կողմից տարեկան բյուջեների ոչ լիարժեք պլանավորմամբ և իրական ապառքների գումարները նախատեսված պլաններում չներառմամբ: Համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի պահանջը այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»:

Կոմիտեի կողմից 01.07.2019թ.-ին համայնքի շենք-շինությունների և դրանց գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը, սահմանված ձևով, տրամադրվել է համայնքապետարանին, որի ճշտման որոշակի աշխատանքներ համայնքապետարանի կողմից արվել են: Սակայն հաշվեքննության ընթացքում կատարվել է 2019թ. համայնքի գույքահարկի շտեմարանում առկա ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող շինությունների թվի, կազմակերպությունների թվի համեմատական Կոմիտեի տվյալների շտեմարանի հետ: Արդյունքում պարզվել է որ, ֆիզիկական անձանց պատկանող շինությունների քանակը Համայնքապետարանի գույքահարկի շտեմարանում կազմել է՝ 14,739 շինություն, իսկ Կոմիտեի շտեմարանում՝ 37,228 շինություն: Տարբերությունը կազմել է 22,489 շինություն, որը հիմնականում պայմանավորված է մինչև 3 մլն դրամ կադաստրային արժեքով բնակելի նշանակության շինությունների (այսինքն՝ չհարկվող անհատական տների և բնակարանների) որոշ մասի համայնքապետարանի շտեմարանում մուտքագրված չլինելով (այդպիսի թվով 4320 շինություններ Համայնքապետարանի շտեմարանում կան, որովհետև նախկինում հարկվել են): Իսկ Իրավաբանական անձանց շինությունների քանակը Կոմիտեի տվյալների շտեմարանում 1,080 է, բայց Համայնքապետարանի տվյալների շտեմարանում այն կազմել է՝ 828 շինություն: Տարբերությունը կազմել է՝ 252

շինություն, որ կապված է հիմնականում «Պրեսստենդ» ՍՊԸ-ի կրպակների քանակների /21հատ/ և նույն «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին պատկանող ենթակայանների քանակների /263հատ/ հետ, որոնք Համայնքապետարանի տվյալների շտեմարանում հաշվառված են մի տողով:[5]

Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով ֆիզիկական անձանց շինությունների գույքահարկի 2019թ. տվյալների շտեմարանում հայտնաբերվել են անճշտություններ, որոնք հիմնականում հետևյալ բնույթի են՝ Համայնքի գույքահարկի տվյալների շտեմարանում իրական արժեքից ավել /պակաս/ հաշվառված շինություններ, համայնքի գույքահարկի բազայում չհաշվառված շինություններ, համայնքի գույքահարկի բազայում անվանափոխություն չկատարած շինություններ:[6]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) ենթակետի պահանջը, այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»: Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով ֆիզիկական անձանց գույքահարկի 2019թ. շտեմարանում հայտնաբերվել են անճշտություններ՝ համայնքի գույքահարկի շտեմարանում իրական արժեքից ավել /պակաս/ հաշվառված շինություններ, համայնքի գույքահարկի շտեմարանում չհաշվառված շինություններ, համայնքի գույքահարկի շտեմարանում անվանափոխություն չկատարած շինություններ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

1. Համայնքի բյուջեի գույքահարկը պլանավորելիս հաշվի առնել ապառքները և տարեկան հաշվարկային ցուցանիշները:

---

[5]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ:

[6]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ:

2. Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ կատարել համայնքի գույքահարկի շտեմարանի ճշտումներ, հայտնաբերել և գրանցել չհաշվառված շինությունները, կատարել անվանափոխություններ և ճշտել շինությունների իրական կադաստրային արժեքները:

Առաջարկություն ՀՀ կառավարությանը և Համայնքապետարանին

Ձեռնարկել միջոցառումներ փոխադրամիջոցների գույքահարկի 2019թ. շտեմարանում առկա, օտարերկրյա քաղաքացիների սեփականություն հանդիսացող 7499 ավտոմեքենաների (որոնք առաջացել են ԵԱՏՄ երկրների /հիմնականում Ղազախստան/ քաղաքացիների կողմից ժամանակավոր գրանցում ստանալով համայնքում, օտարերկրացու անունով որպես սեփականություն գրանցելով և իրենց հետ իրենց երկիր տանելով նշված փոխադրամիջոցները) գույքահարկի հարցի կարգավորման ուղղությամբ:

Ա.Կիսակառույց շինությունների գույքի պետական գրանցում

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման 123 և 125 հոդվածների մասով՝ 2019թ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում Համայնքապետարանը ընդհանրապես կառուցապատողին գրավոր նախազգուշացնում չի արել՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին, ինչպես նաև կառուցապատողին որևէ վարչական պատասխանատվության չի ենթարկել

Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով իրականացված, գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող շենք-շինությունների հաշվառման և գույքագրման ընթացքում պարզվել է որ՝ Համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 22 շենք շինությունների սեփականատերեր, 2019թ. ստանալով համայնքապետարանից շինարարության թուլտվություն, սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում չավարտելով շինության կառուցումը կամ վերակառուցումը, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված կարգով գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող փաստացի կիսակառույցների համար չեն կատարել գույքի պետական գրանցում: Արդյունքում, առ այսօր, իրենց պատկանող կիսակառույց շինությունների մասով չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր:[7]

[7]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝

Համայնքապետարանի կողմից սահմանված ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ որևէ նախազգուշացում կառուցապատողին չի արվել: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման 123 հոդվածի՝ «Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը (բացառությամբ գյուղական բնակավայրերում իրականացվող կառուցապատման և անհատական բնակելի տների) չավարտելու դեպքում իրավասու մարմինը կառուցապատողին գրավոր նախազգուշացնում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին» մասով: Ինչպես նաև՝ Համայնքապետարանը կառուցապատողին որևէ վարչական պատասխանատվության չի ենթարկել: Առկա է անհամապատասխանություն 125 հոդվածի՝ «Սույն կարգի 123-րդ կետով սահմանված դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության» մասով:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման 123 և 125 հոդվածների մասով՝ 2019թ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում Համայնքապետարանը ընդհանրապես 22 շենք-շինությունների սեփականատերերի գրավոր նախազգուշացնում չի արել՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին: Ինչպես նաև կառուցապատողին որևէ վարչական պատասխանատվության չի ենթարկել:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ձեռնարկել միջոցառումներ՝ համայնքի տարածքում գտնվող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, պետական գրանցում չստացած կիսակառույց շենք-շինությունները անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառելու և գրանցումն ապահովելու ուղղությամբ:

Բ. Գույքի պետական գրանցում ավարտված շինարարություններից հետո

ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված անհամապատասխանության վերաբերյալ:

Առկա է անհամապատասխանություն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ>> մասով:

Հաշվեքննության ընթացքում ընտրանքային կարգով իրականացված, գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող, շենք-շինությունների հաշվառման և գույքագրման ընթացքում պարզվել է որ՝ Համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 6 շենք շինությունների սեփականատերեր, 2019թ. սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում ավարտելով շինության կառուցումը կամ վերակառուցումը, ստանալով ավարտական ակտեր «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենք շինությունների համար չեն կատարել գույքի պետական գրանցում: Արդյունքու,մ առ այսօր, իրենց պատկանող շինությունների մասով չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր, որոնց ցանկը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 10

Հ/Հ	Անուն/ազգանուն	Հասցե	Կառույց	Մակերես (քմ)	Ավարտական ակտի համար	Տրման ամսաթիվ
1	Ս.Ջ.Ղ.	Լոեոյի փող. 23գ	կառուցված ավտոտեխսպասարկման կետ	225.28	11	15.03.2019թ.
2	Ն.Հ.Պ. , Հ.Ն.Պ.	Վարդանանց փող. 58	կառուցված պարիսպ	206.97	14	19.04.2019թ.
3	Ա.Պ.	Մյասնիկյան փող. 4	վերակառուցված խանութ, խանութի արդիականացված ճակատ	42.16	33	05.09.2019թ.
4	Ա.Ս.	Տերյան փող. 3	կազմակերպված մուտք, ձևափոխված տանիք	124.72	41	15.10.2019թ.
5	Ն.Գ.Մ.	Շրջադարձայ ին փող. 2	կառուցված բնակելի տուն խանութ	159.17	48	12.11.2019 թ.
6	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ	Երևանյան խճուղու 103/1	կառուցված VAN 020 հիմնական բջջային կապի կայան		49	12..11.2019թ.

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ>> մասով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ձեռնարկել միջոցառումներ՝ համայնքի տարածքում գտնվող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ պետական գրանցում չստացած, սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում շինության կառուցումը կամ վերակառուցումը ավարտած և ավարտական ակտեր ստացած, թվով 6 շենք-շինությունները անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառելու և գրանցումն ապահովելու ուղղությամբ:

Գ. Հասարակական նշանակության օբյեկտների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն նաև <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ>> և ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի ա) ենթակետի մասով: Համայնքապետարանը օրենքով սահմանված կարգով իր տարածքում գտնվող թվով 8 որպես հասարակական նշանակության օբյեկտ գործող, սակայն բնակելի նշանակության շինությունների մասով, չի դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմնին շինությունների գործառնական նշանակությունը փոխելու համար:

Հաշվեքննության ընթացքում ընտրանքային կարգով իրականացված, գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող, շենք-շինությունների հաշվառման և գույքագրման ընթացքում պարզվել է որ՝ Համայնքի տարածքում, հասարակական նշանակության օբյեկտներ հանդիսացող, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, սակայն գործառնական նշանակությամբ փաստացի բնակելի նշանակության և 3,000.00 հազ. դրամ կադաստրային արժեքը չգերազանցող (գույքահարկով չհարկվող) թվով 8 շենք շինությունների գործառնական

նշանակությունը չի փոխված հասարակականի: Արդյունքում, համայնքի բյուջեն զրկվել է լրացուցիչ եկամուտից՝ գույքահարկից, որոնց ցանկը ներկայացվում է աղյուսակի տեսքով

Աղյուսակ 11

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Հասցե	Գործում է որպես	Կադաստրային արժեք	Պետական գրանցման ամսաթիվ	Գործառնական նշանակությունը
1	Հ.Հ.	Մ.Խորենացու 6/1	գրասենյակ	1,808.29	2/10/2014	բնակարան
2	Վ. Հ.	Տ. Մեծի պող.41/36	գրասենյակ	2,383.85	5/17/2012	բնակարան
3	Ա. Ռ.	Վարդանանց 21/1	վարսավիրանոց	1,498.11	9/23/2016	բնակարան
4	Ն.Ա.	Նժդեհի 1/1	փուռ	2,040.97	2/1/2010	բնակարան
5	Դ.Ա.	Աղայան 71/1	խանութ	1,644.55	5/12/2014	բնակարան
6	Ու. Հ.	Տարոն-2 ՔՇՀ-3	ատամնաբուժարան	1,695.20	11/30/2012	բնակարան
7	Խ.Ա.	Տարոն-2 ՔՇՀ-4	խանութ	2,892.12	9/18/2009	բնակարան
8	Բ.Կ.	Տերյան փող. 4/38	գրասենյակ	1,044.48	7/10/2014	բնակարան

Արդյունքում՝ Համայնքապետարանը չի բավարարել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ և ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի ա) ենթակետի՝ պահանջները և իր վարչական տարածքում գտնվող շենք-շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվությունը չի ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում և զրկվել է լրացուցիչ եկամտից:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն նաև <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ>> և ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ

կետի ա) ենթակետի մասով: Համայնքապետարանը, օրենքով սահմանված կարգով, իր տարածքում գտնվող թվով 8՝ որպես հասարակական նշանակության օբյեկտ գործող, սակայն բնակելի նշանակության շինությունների մասով, չի դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմնին՝ շինությունների գործառնական նշանակությունը փոխելու համար:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմնին՝ համայնքի տարածքում գտնվող թվով 8՝ որպես հասարակական նշանակության օբյեկտ գործող, սակայն բնակելի նշանակության, շինությունների գործառնական նշանակությունը բնակելիից հասարակականի փոխելու համար:

II. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

15. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113, օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Կատարողական ակտի ընդհանուր գումարում թվաբանական սխալ

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 4 կատարողական ակտի ընդհանուր գումարում առկա է թվաբանական սխալ: Այսպես, 71,800.08 հազ.դրամի փոխարեն ներկայացվել է վճարման 72,000.00 հազ. դրամ, որը վճարվել է Համայնքապետարանի կողմից:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ստացված ծառայությունների հաշիվներում թվաբանական անճշտությունները հանգեցնում են 200.00 հազ. դրամ խեղաթյուրման:

16. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի սեպտեմբերի 18-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագիրը՝ Համայնքապետարանի և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 72,000 հազ. դրամ և լրացուցիչ Համաձայնագիր N1 առ 19 դեկտեմբերի 2019թ. 7,200 հազար դրամ: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 79,200 հազ. դրամ:

Պայմանագրով նախատեսվել է կատարել Վանաձորի «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները:

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերի և կատարված աշխատանքների ֆիզիկական զննման արդյունքում պարզվեց, որ աշխատանքները չեն

համապատասխանում կատարողական ակտերում ներկայացված աշխատանքների ծավալներին: Նշված անհամապատասխանությունը գումարային արտահայտությամբ կազմում է 1,312.50 հազ.դրամ:[8]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ֆիզիկական զննման և ներկայացված կատարողական ակտերի տարբերությունները հանգեցրել են 1,312.50 հազ. դրամ գումարով ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այսուհետ յուրաքանչյուր կատարողական ակտ հաստատելիս կատարել աշխատանքների ֆիզիկական չափագրումներ և դրանց արդյունքների հիման վրա հաստատել կատարողական ակտը:

17.Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի Հայքի հրապարակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի հուլիսի 24-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ - ԵՓՄ-19/01-2 պայմանագիրը Համայնքապետարանի և «Պրիզմա Վան» ՍՊԸ-ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 103,956.59 հազ. դրամ (լրացուցիչ համաձայնագիր ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/116 առ 23.12.2019թ.- 4,551.33 հազ.դրամ): Պայմանագրով նախատեսվել է Վանաձորի Հայքի հրապարակի հիմնանորոգման աշխատանքները:

«Պրիզմա Վան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերի և կատարված աշխատանքների ֆիզիկական զննման արդյունքում պարզվեց, որ աշխատանքները չեն համապատասխանում կատարողական ակտերում ներկայացված աշխատանքների

---

[8] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված խեղաթյուրման վերաբերյալ:

ծավալներին: Նշված անհամապատասխանությունը գումարային արտահայտությամբ կազմում է 1,033.09 հազ.դրամ:[9]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ֆիզիկական զննման և ներկայացված կատարողական ակտերի տարբերությունները հանգեցրել են 1,033.09 հազ.դրամ գումարով ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այսուհետ յուրաքանչյուր կատարողական ակտ հաստատելիս կատարել աշխատանքների ֆիզիկական չափագրումներ և դրանց արդյունքների հիման վրա հաստատել կատարողական ակտը:

18. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5112. օբյեկտ՝ Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի հուլիսի 16-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ-ԵՓՄ-19/01-1 պայմանագիրը Համայնքապետարանի և «ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ-ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 150,000.00 հազ. դրամ, իսկ առ 08.11.2019թ. թիվ 3 լրացուցիչ համաձայնագրի գումարը՝ 7,814.62 հազ. դրամ:

Պայմանագրով նախատեսվել է Վանաձոր Համայնքի Հայքի հրապարակում երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների տեղադրման աշխատանքների կատարում:

«ՎԱՆՏԵԽՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերի և կատարված աշխատանքների

[9] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված խեղաթյուրման վերաբերյալ

ֆիզիկական զննման արդյունքում պարզվեց, որ աշխատանքները չեն համապատասխանում կատարողական ակտերում ներկայացված աշխատանքների ծավալներին: Նշված անհամապատասխանությունը գումարային արտահայտությամբ կազմում է 1,503.79 հազ. դրամ:[10]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ֆիզիկական զննման և ներկայացված կատարողական ակտերի տարբերությունները հանգեցրել են 1,503.79 հազ. դրամ գումարով ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այսուհետ յուրաքանչյուր կատարողական ակտ հաստատելիս կատարել աշխատանքների ֆիզիկական չափագրումներ և դրանց արդյունքների հիման վրա հաստատել կատարողական ակտը:

19. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի փետրվարի 1-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ19/19 պայմանագիրը Համայնքապետարանի և «Գունաշեն» ՍՊԸ -ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 5,976.00 հազ.դրամ:

Պայմանագրով նախատեսվել է Վանաձոր համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման աշխատանքների կատարում:

«Գունաշեն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերի և կատարված աշխատանքների ֆիզիկական զննման արդյունքում պարզվեց, որ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ19/19 պայմանագրին կից հավելված

[10] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված խեղաթյուրման վերաբերյալ

թիվ 1-ով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով (Նախահաշիվ 1 և Նախահաշիվ 2) նախատեսված անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման նյութածախսը և նյութերի տեսականին չի համապատասխանում փաստացի ծախսված նյութերի տեսակին և քանակին:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Նշված աշխատանքների մասով հաստատված անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման նյութածախսի և նյութերի տեսականու փաստացի աշխատանքների հետ շեղումները հանգեցնում են ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրմանը 5,976.00 հազ.դրամ գումարով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այսուհետ յուրաքանչյուր կատարողական ակտ հաստատելիս ներկայացնել փաստացի օգտագործված նյութական արժեքների ծավալը և գումարը, ինչպես նաև այն հասցեն, որտեղ նշված աշխատանքներն իրականացվել են:

20. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ Վանաձորի համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգում. աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին կնքվել է ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ19/100 պայմանագիրը Համայնքապետարանի և «Գունաշեն» ՍՊԸ -ի միջև: Պայմանագրի գումարը կազմել է 894.00 հազ.դրամ:

Պայմանագրով նախատեսվել է Վանաձոր համայնքի անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման աշխատանքների կատարում:

«Գունաշեն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված շինարարական աշխատանքների կատարողական ակտի և կատարված աշխատանքների ֆիզիկական զննման արդյունքում պարզվեց, որ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ19/100 պայմանագրին կից հավելված թիվ 1-ով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով (Նախահաշիվ 2) նախատեսված անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման նյութածախսը և նյութերի տեսականին չի համապատասխանում փաստացի ծախսված նյութերի տեսակին և քանակին:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Նշված աշխատանքների մասով հաստատված անձրևաջրատար դիտահորերի կապիտալ նորոգման նյութածախսի և նյութերի տեսականու փաստացի աշխատանքների հետ շեղումները հանգեցնում են ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրմանը 894.00 հազ.դրամ գումարով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այսուհետ յուրաքանչյուր կատարողական ակտ հաստատելիս ներկայացնել փաստացի օգտագործված նյութական արժեքների ծավալը և գումարը, ինչպես նաև այն հասցեն, որտեղ նշված աշխատանքներն իրականացվել են:

21.Աղբահանության վճարների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Համայնքի բյուջե աղբահանության վճարներից փաստացին մուտքերի բանկային վճարումների տեղեկանքի և քաղաքապետարանի համակարգչային բազայի փաստացի վճարումների տվյալների միջև, տարբերությունը կազմել է՝ 67.5 հազ. դրամ:

Համայնքի ավագանու 26.10.2018թ. թիվ 116-Ն որոշումով սահմանվել է՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր բնակչի համար ամսական 0.2 հազ. դրամ» և «Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ մեկ խորանարդ մետրի համար՝ 2.46 հազ. դրամ վարձավճար»: Սակայն շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար համայնքի բյուջե մուտքեր չեն նախատեսվել և չեն գանձվել:

Աղբահանության վճարների հաշվարկման և գանձման համար քաղաքապետարանում ստեղծված համակարգչային բազաների ուսումնասիրության և աղբահանության վճարների հավաքագրման ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համաձայն Համայնքապետարանի և Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության, համայնքի տարածքում 2017թ. հաշվառված է շուրջ 105 հազ. բնակիչ, փաստացին կազմել է 80 հազ. բնակիչ: Իսկ Համայնքապետարանի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից համայնքի 2019 թվականի բյուջե եկամտային մասի վերաբերյալ ներկայացված վերլուծությունների համաձայն 31.12.2017թ. դրությամբ աղբահանության վճար վճարող իրավաբանական անձանց թիվը եղել է 1350: Աղբահանության վճարների

համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար հաշվի են առնվել 2017թ. փաստացի կատարողականը, վճարի վերահաշվարկները և չվճարողների թիվը, ինչպես նաև ապառքները, որոնք թվային տեսքով ներկայացված են աղյուսակում

Աղյուսակ 12,հազ.դրամ

Աղբահանության վճար վճարող	**2017թ. փաստացի**	**2017թ. վճարի վերահաշվարկ և վճարի զրոյացում /վճարող/**	**2017թ. աղբավճար չեն վճարել /վճարող/**	**2017թ. փաստացիի նկատմամբ աճ/գումարներ ապառքներից/**	**2019թ. կանխատեսում**
ֆիզիկական անձ	153,202.30	3341	17368	9,477.70	162,680.00
իրավաբանական անձ	32,023.30	53	483	11,296.70	43,320.00
Ընդամենը	**185,225.60**	**3394**	**17851**	**20,774.40**	**206,000.00**

Համայնքի ավագանին համայնքի բյուջեն հաստատելուց աղբահանության վճարներից կանխատեսվող 206,000.00 հազ. դրամ մուտքերի փոխարեն նախատեսել և հաստատել է՝ 199,000.00 հազ. դրամի չափով անտեսելով կանխատեսվող ապառքներից 7,000.00 հազ. դրամ:

Համայնքի բյուջե աղբահանության վճարներից մուտքեր 2019թ. նախատեսված 199,000.00 հազ. դրամի դիմաց փաստացին, համաձայն բանկային վճարումների տեղեկանքի, կազմել է 179,095.50 հազ. դրամ, իսկ համայնքապետարանի համակարգչային բազայի համաձայն փաստացի վճարվել է՝ 179,163.00 հազ. դրամ, տարբերությունը կազմել է՝ 67.50 հազ. դրամ:

Աղբահանության վճարների տարեկան հաշվարկային ցուցանիշը, նախատեսվածն ու փաստացի կատարվածը և բյուջե չվճարված գումարները ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 13, հազ.դրամ

Վճար վճարող	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 31.12.2017թ. դրությամբ	2019թ. Աղբահանության վճար		Ենթակա է վճարման 31.12.2017թ. դրությամբ	Ենթակա է վճարման 31.12.2019թ. դրությամբ
		պլան	փաստ		
Ֆիզիկական անձ	222,040.60	155,680.00	143,246.30	543,092.60	681,191.80
Իրավաբանական անձ	35,207.90	43,320.00	35,849.20	7,028.20	16,360.20
Ընդամենը	**257,248.50**	**199,000.00**	**179,095.50**	**550,120.80**	**697,552.00**

Արդյունքում ունենալով 31.12.2017թ. դրությամբ աղբահանության վճարի բյուջե վճարման ենթակա գումար՝ 550,120.8 հազ. դրամ և տարեկան հաշվարկային ցուցանիշ՝ 257,248.5 հազ. դրամ, համայնքապետարանը 2019թ. աղբահանության վճարից մուտքեր նախատեսել է՝ 199,000.0 հազ. դրամ, այսինքն տարեկան հաշվարկայինից պակաս, պլանային ցուցանիշների մեջ ապառքներ չներառելով:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Համայնքի բյուջե աղբահանության վճարներից մուտքեր 2019թ. նախատեսված 199,000.0 հազ. դրամի դիմաց փաստացին՝ համաձայն բանկային վճարումների տեղեկանքի, կազմել է 179,095.5 հազ. դրամ, իսկ քաղաքապետարանի համակարգչային բազայի համաձայն փաստացի վճարվել է՝ 179,163.0 հազ. դրամ, տարբերությունը կազմել է՝ 67.5 հազ. դրամ: Չնայած նրան որ, համապատասխան ստորաբաժանման կողմից աղբահանության վճարներ հաշվարկվել և կանխատեսվել են 206,000.0 հազ. դրամ և 31.12.2017թ. դրությամբ աղբահանության վճարի բյուջե վճարման ենթակա գումար կազմել է 550,120.8 հազ. դրամ, իսկ տարեկան հաշվարկային ցուցանիշ՝ 257,248.5 հազ. դրամ: Արդյունքում համայնքապետարանը 2019թ. աղբահանության վճարից մուտքեր նախատեսել է՝ 199,000.0 հազ. դրամ, այսինքն տարեկան հաշվարկայինից պակաս, պլանային ցուցանիշների մեջ ապառքներ չներառելով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Աղբահանության վճարներից համայնքի բյուջեի մուտքերը հաստատել՝ հաշվի առնելով նախորդ տարիներից առաջացած ապառքները, և Համայնքապետարանի համակարգչային շտեմարանում առկա փաստացի վճարումները համեմատել բանկային վճարումների տեղեկանքի հետ:

22. «Տրանսպորտային նյութեր» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի և ֆինանսների նախարարի 09.03.2016թ 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի պահանջների հետ: Ավտոուղեգրերում չի նշվել մեքենաների կատարված երթերի ուղղությունը, ինչպես նաև չեն նշվել ավտոմեքենաների մեկնման և ժամանման վայրերը: Շահագործված ավտոմեքենաների ուղեգրերում արձանագրված վազքի տվյալները լրացվել են հաշվարկով՝ ելնելով ստացված վառելիքի ընդհանուր քանակությունից՝ անտեսելով ավտոմեքենաների վազքի ցուցիչների փաստացի տվյալները:

Համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված են 12 հատ մեքենա-մեխանիզմներ, նույն թվում՝ 5 հատ մարդատար ծառայողական մեքենա, 6 հատ բեռնատար և 1 ամբարձիչ: 2019 թվականի ընթացքում շահագործվել են միայն մարդատար ծառայողական ավտոմեքենաները, որոնց շահագործման համար 4264՝ «Տրանսպորտային նյութեր» հոդվածով 2019 թվականի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է 12,000.00 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմել է 11,906.00 հազ.դրամ:

Աղյուսակ 14,հազ.դրամ

NN	Անվանումը	Ճշտված պլան	Պայմանագիր	Փաստացի
1	Վառելիք /բենզին ռեգ./	6,970.00	6,970.00	6,970.00
2	Յուղ և ավտոպահեստամասեր	5,230.00	5,230.00	4,936.00
	Ընդամենը	**12,200.00**	**12,200.00**	**11,906.00**

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի և ֆինանսների նախարարի 09.03.2016թ 142-Ա «Հանրային հատվածի

կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի պահանջների հետ: Ավտոուղեգրերում չի նշվել մեքենաների կատարված երթերի ուղղությունը, ինչպես նաև չեն նշվել ավտոմեքենաների մեկնման և ժամանման վայրերը: Շահագործված ավտոմեքենաների ուղեգրերում արձանագրված վազքի տվյալները լրացվել են հաշվարկով՝ ելնելով ստացված վառելիքի ընդհանուր քանակությունից՝ անտեսելով ավտոմեքենաների վազքի ցուցիչների փաստացի տվյալները:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Շահագործվող ավտոմեքենաների ուղեգրերում նշել մեքենայի ճշգրիտ երթուղին, իսկ հաշվարկները իրականացնել փաստացի կատարված վազքերի հիման վրա:

23. Վառելանյութի համար կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի և ֆինանսների նախարարի 09.03.2016թ 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի պահանջների հետ՝ այն է

1. «Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկի (Ձև ԾԽ-6) 5-րդ սյունյակում լրացվում է երթուղին և/կամ պատվիրատուի հանձնարարությունը»:

2. «Վազքի ցուցիչների ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) վերջում (կմ) տողում մեխանիկի կողմից լրացվում է վազքի ցուցիչի ցուցմունքը երթուղային թերթիկում նշված օրվա կամ ժամանակաշրջանի վերջի ամսաթվի դրությամբ»:

Վանաձորի համայնքապետարանի տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը կանոնակարգվել է հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 09.01.2019թ. թիվ 27 որոշումը: Նշված որոշմամբ սահմանվել է համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված մարդատար ծառայողական ավտոմեքենաների վառելիքի ամսական չափաքանակները:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2019թ-ի ընթացքում ծառայողական ավտոմեքենաների շահագործման համար ստացված բենզինի նորմաների և կատարված փաստացի ծախսը ըստ ավտոմեքենաների՝

Աղյուսակ 15

NN	Ավտոմեքենայի մակնիշ	Ավտոմեքենայի պետհամարանիշ	Ծախսվող վառելիքի նորմա	Վառելիքի մնացորդ առ 01.01.2019	Ստացված վառելիք	Ծախսված վառելիք	Վառելիքի մնացորդ առ 31.12.2019	2019թ ընթացքում ծախսված վառելիք	
			լիտր	լիտր	հազ. լիտր	հազ. լիտր	լիտր	հազ.կմ	գումար հազ.դրամ
1	Տոյոտա Քեմրի	001ԼԼ36	370.0	410	4,320	4,360	370	25,620	1,787.6
2	ԳԱԶ3110-101	799ԼԼ70	260.0	260	3,120	3,120	260	22,638	1,279.2
3	Մերսեդես Բենց Ե200	755ԼԼ70	250.0	150	2,980	2,920	210	25,787	1,197,2
4	Վազ-21214	654ԼԼ70	300.0	300	3,600	3,600	300	26,109	1,476.0
5	Վազ-21070	653ԼԼ70	240.0	100	2,980	2,840	240	27,635	1,164.4
	Ընդամենը		**1,420**	**1,220**	**17,000**	**16,840**	**1,380**	**127,789**	**6,904.4**

Վառելանյութի ծախսի դուրսգրման համար հիմք են հանդիսացել լրացված ավտոուղեգրերը: Ավտոուղեգրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավտոուղեգրերը հիմնականում լրացվել են թերի մասնավորապես՝ ավտոուղեգրերում չի նշվել մեքենաների կատարված երթերի ուղղությունը նշելով միայն ք. Վանաձոր, ինչպես նաև չեն նշվել ավտոմեքենաների մեկնման և ժամանման վայրերը: Պետք է նշել, որ շահագործված ավտոմեքենաների ուղեգրերում արձանագրված վազքի տվյալները լրացվել են հաշվարկով՝ ելնելով ստացված վառելիքի ընդհանուր քանակությունից՝ անտեսելով ավտոմեքենաների վազքի ցուցիչների փաստացի տվյալները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանված նորմաները:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 48-րդ կետի և ֆինանսների նախարարի 09.03.2016թ 142-Ա «Հանրային հատվածի կազմակերպությունների գործառնությունների փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության օրինակելի ուղեցույցը սահմանելու մասին» հրամանի 7.7 կետի պահանջների հետ՝ այն է

1. «Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկի (Ձև ԾԽ-6) 5-րդ սյունյակում լրացվում է երթուղին և/կամ պատվիրատուի հանձնարարությունը»:

2. «Վազքի ցուցիչների ցուցմունքը ժամանակաշրջանի (օրվա) վերջում (կմ) տողում մեխանիկի կողմից լրացվում է վազքի ցուցիչի ցուցմունքը երթուղային թերթիկում նշված օրվա կամ ժամանակաշրջանի վերջի ամսաթվի դրությամբ»:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Շահագործվող ավտոմեքենաների ուղեգրերում նշել մեքենայի ճշգրիտ երթուղին, իսկ հաշվարկները իրականացնել փաստացի կատարված վազքերի հիման վրա:

24. Ավտոպահեստամասերի համար կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 1-ին, և 5-րդ և 46-րդ կետերի պահանջների հետ՝ այն է

1.Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված 1-ի:

5.Հիմնական միջոցների (տեղակայման ենթակա սարքավորումների) թերությունների բացահայտման ակտ (ձև ՀՄ-5).

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2019թ-ի ընթացքում ծառայողական ավտոմեքենաների շահագործման համար պահեստամասերի և քսայուղերի պայմանագրային և փաստացի ծախսը ըստ ավտոմեքենաների՝

Աղյուսակ 16, հազ.դրամ

NN	Ավտոմեքենայի մակնիշ	Ավտոմեքենայի պետհամարանիշ	Ավտոպահեստամասերի և յուղի փոխարինման փաստացի ծախս
1	Տոյոտա Քեմրի	001ԼԼ36	1,181.00
2	ԳԱԶ3110-101	799ԼԼ70	895.50
3	Մերսեդես Բենց E200	755ԼԼ70	1,078.50
4	Վազ-21214	654ԼԼ70	1,040.00
5	Վազ-21070	653ԼԼ70	741.00
	Ընդամենը		**4,936.00**

2019թ-ի ընթացքում կնքված պայմանագրով ձեռք է բերվել և ծախսագրվել է 4,936.00 հազ. դրամի ավտոպահեստամաս: Ծառայության մատուցումը կատարվել է պայմանագրի 3.1 կետի պահանջներին համապատասխան՝ «Մատուցված ծառայությունը ընդունվում է հիմք ընդունելով պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրությունը»: Պետք է նշել, որ ավտոմեքենաների պահեստամասերի փոխարինման համար համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից չեն կազմվել համապատասխան թերությունների ակտերը, որոնց հիման վրա պետք է կատարվեր ավտոմեքենայի զննումը և պահեստամասերի փոխարինումը:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Ավտոմեքենաների պահեստամասերի փոխարինման համար համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից չեն կազմվել համապատասխան թերությունների ակտերը որի հիման վրա պետք է կատարվեր ավտոմեքենայի զննումը և պահեստամասերի փոխարինումը: Առկա է խեղաթյուրում ֆինանսների նախարարի 01.02.2016թ 37-Ն «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» հրամանի 1-ին, և 5-րդ և 46-րդ կետերի պահանջների հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Շահագործվող ավտոմեքենաների համար հաստատել գրանցամատյան: Գրանցամատյանում՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար, վարել առանձնացված հաշվառում: Հաշվառմամբ արտացոլել այն նյութերի և ապրանքների անվանումը, որոնք, համաձայն թերությունների բացահայտման ակտերի, անհրաժեշտ են փոխման կամ վերանորոգման: Հաշվառմամբ նշել նաև աշխատանքները և միջոցառումները ու դրանց կատարման ժամկետները:

25. Էներգետիկ ծառայություններ. Վանաձոր քաղաքի փողոցների գիշերային լուսավորություն համար ծախսված էլեկտրաէներգիայի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում գիշերային լուսավորության էլէկտրաէներգիայի ծախսի դրվածքային և փաստացի հզորությունների միջև: Գիշերային լուսավորության էլեկտրաէներգիայի ծախսը դրվածքային հզորությունից միջին տարեկան հաշվարկով պակաս է 59.08 կՎտ/ժամով կամ գիշերային լուսավորության համար տարեկան կտրվածքով պակաս է ծախսվել 104,689.76 կՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեով՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 103,621.0 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերը կազմել են 101,543.0 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն ըստ ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 17 հազ.դրամ

Հ/Հ	*Ծախսերն ըստ ուղղությունների*	*Փաստացի*
1	Վանաձոր քաղաքի փողոցների գիշերային լուսավորություն, այդ թվում	74,896.50
1.1	Ընթացիկ տարի	1,335.50
1.2	Նախորդ տարիների պարտքի մարում	-
2	Վանաձորի համայնքապետարանի շենքի էներգետիկ ծառայությունների գծով ծախսեր	16,776.40
3	Վանաձորի համայնքապետարանի շենքի բնական գազի մատակարարման ծառայությունների գծով ծախսեր	8,534.80
	Ընդամենը	**101,543.00**

Վանաձոր համայնքի 2019 թվականի բյուջեով՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսված 103,621.00 հազ. դրամից 25,311.20 հազ. դրամը նախատեսվել է աշխատակազմի պահպանման համար և 78,285.00 հազ. դրամ նախատեսվել է փողոցային լուսավորության, լուսաֆորային օբյեկտների համակարգի էներգետիկ ծառայությունների համար: Ըստ 2019 թ-ի Վանաձոր քաղաքի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 4212 տնտեսագիտական դասակարգման հոդվածով դրամարկղային ծախսը կազմել է 101,543.00 հազ. դրամ, որից 25,335.50 հազ. դրամը կազմել է աշխատակազմի պահպանման ծախսերը, իսկ 76,332.00 հազ. դրամը փողոցային լուսավորության, լուսաֆորային օբյեկտների համակարգի էներգետիկ ծառայությունների ծախսերը: Առկա է անհամապատասխանություն հաշվետվությունում արտացոլված 76,332.00 հազ. դրամի ծախսերի մասով, քանի որ տվյալ էլեկտրաէներգիայի ծախսի մեջ ներառված է ոչ միայն փողոցային լուսավորության և լուսաֆորային օբյեկտների

համակարգի ծախսը, այլ նաև հանրակացարանների շենքերի էլեկտրաէներգիայի ծախսը և քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող շատրվանների էլեկտրաէներգիայի ծախսը:

Ստորև աղյուսակում ներկայացվում է Վանաձոր քաղաքի փողոցների գիշերային լուսավորության համար էլեկտրաէներգիայի ամսական ծախսերը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ծախսի միջին ամսական ժամային հաշվարկները՝

Աղյուսակ 18, հազ.դրամ

Ամիս	Էլ.էներգիայի ամսական ծախսը կՎտ/ժամ	Լուսավորության համակարգի միացման և անջատման ժամերը և օրվա գիշերային լուսավորության տևողությունը /ժամ/	Ընդամենը գիշերային լուսավորության տևողությունը /ժամ/	Միջին ամսական ծախսը մեկ ժամվա ընթացքում /կՎտ/ժամ/
Հունվար	234,176	6 օր՝ 14ժամ 25 օր՝ 6 ժամ	234	1000.72
Փետրվար	138,899	5.5	154	901.94
Մարտ	139,101	5	155	897.42
Ապրիլ	118,727	4.5	135	879.45
Մայիս	105,878	4	124	853.85
Հունիս	103,539	3.5	105	986.08
Հուլիս	114,202	3	124	920.98
Օգոստոս	137,575	3.5	139.5	986.20
Սեպտեմբեր	137,175	4	120	1143.12
Հոկտեմբեր	169,799	4.5	139.5	1217.19
Նոյեմբեր	163,480	5	150	1089.86
Դեկտեմբեր	193,357	30 օր՝ 6ժամ 1 օր՝ 14ժամ	192	1007.06
Ընդամենը	***1,755,908***		***1772***	***990.92***

Համաձայն 01.01.2019 թ-ի դրությամբ համայնքում առկա շահագործվող լուսատուների լամպերի քանակների և հզորությունների հաշվարկների, գիշերային լուսավորության էլեկտրաէներգիայի միջին դրվածքային հզորությունը ըստ տրամադրված գիշերային լուսավորության լամպերի հաշվարկի տեղեկատվության կազմում է 1050 կՎտ/ժամ: Առկա է անհամապատասխանություն գիշերային լուսավորության էլեկտրաէներգիայի ծախսի դրվածքային և փաստացի հզորությունների միջև: Այսպիսով, համեմատելով փաստացի և դրվածքային հզորությունները՝ բացառությամբ սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների էլեկտրաէներգիայի ծախսը դրվածքային հզորությունից միջին տարեկան հաշվարկով պակաս է 59.08 կՎտ/ժամով կամ գիշերային լուսավորության համար

տարեկան կտրվածքով պակաս է ծախսվել 104,689.76 կՎտ/ժամ (1050-990.92)x1772) էլեկտրաէներգիա:

Համայնքի գիշերային լուսավորության սարքերի անջատումները և միացումները կատարվել են վարչական շենքի պահակային ծառայություններ իրականացնող աշխատակիցների կողմից, սակայն նրանց վրա տվյալ պարտականությունները պաշտոնապես դրված չեն եղել: Փաստացի անջատումների և միացումների վերաբերյալ գրանցումներ չի կատարվել:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում գիշերային լուսավորության էլէկտրաէներգիայի ծախսի դրվածքային և փաստացի հզորությունների միջև: Գիշերային լուսավորության էլեկտրաէներգիայի ծախսը դրվածքային հզորությունից միջին տարեկան հաշվարկով պակաս է 59.08 կՎտ/ժամով կամ գիշերային լուսավորության համար տարեկան կտրվածքով պակաս է ծախսվել 104,689.76 կՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Գիշերային լուսավորության սարքերի միացումների և անջատումների պարտականությունները դնել կոնկրետ պատասխանատուների վրա, միացումների և անջատումների ժամերը գրանցել կոնկրետ փաստաթղթերում՝ հետագայում ծախսերի և վելուծությունների համար հաշվարկները ճիշտ կատարելու համար:

26. «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

Համայնքապետարանի 2019թ բյուջեով «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով՝ ճշտված պլանով ծախս է նախատեսվել 20,400.00 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմել է 17,053.40 հազ. դրամ: Համայնքապետարանի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) տվյալների համաձայն 2019թ. ընթացքում համայնքապետարանում ստացվել են աջակցություն ստանալու թվով 59 դիմումներ:

Ստացված դիմումներից 57-ին տրվել են աջակցության գումար, իսկ 2-ի դեպքում մերժվել են:

Ստորև աղյուսակում ներկայացվում է նշված հոդվածով կատարված ծախսերի ուղղվածությունը ըստ գործընկերների՝

Աղյուսակ 19, հազ.դրամ

Հ/Հ	Գործընկեր	Գումար
1	27 դեպքով համայնքի համատիրություններին տրվել է աջակցություն՝ նույն թվում 3 համատիրությունների վերելակների վերանորոգման համաֆինանսավորման և 24 դեպքով շինանյութերի ձեռքբերման համար	9,490.00
2	Վանաձորի 22 հասարակական կազմակերպությունների տարբեր ծրագրերի իրականացման համար	4,263.40
3	Թվով երկու ՍՊԸ-ների	1,300.00
4	Թվով 6 լրատվամիջոց, նույն թվում երկու հեռուստաընկերություն	2,000.00
	Ընդամենը	***17,053.40***

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 4918 տնտեսագիտական դասակարգման հոդվածով 1,300.00 հազ.դրամ բաշխվել է վերոգրյալ ընկերություններին, մինչդեռ օրենքով նախատեսված է, որ «Նվիրատվությունները հատկացվում են տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին և այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին»

Առկա է խեղաթյուրում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

1. Այն է հասարակական կազմակերպություններին նվիրատվությունները բաղկացած են անդամավճարների տեսքով, բաժանորդագրությունների, պարբերական կամ ոչ պարբերական ձևով կատարվող կանոնավոր նվիրատվությունների տեսքով տրամադրվող դրամական հատկացումները…:

2. Նվիրատվությունները հատկացվում են տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին և այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Տնտեսագիտական դասակարգման 4918 հոդվածով 1,300.00 հազ.դրամ բաշխվել է թվով երկու ՍՊԸ-ների, մինչդեռ օրենքով նախատեսված է, որ «Նվիրատվությունները հատկացվում են տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին և այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին»:

Առկա է խեղաթյուրում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ձեռնարկել միջոցառումներ՝ թվով երկու ՍՊԸ-ներին տրված 1,300.00 հազ. դրամը համայնքի բյուջե հետ վերադարձնելու ուղղությամբ:

27. Աշխատանքի վարձատրության գծով կատարված ծախսերի վերաբերյալ. ՀՀ պետական սահմանը հատած Համայնքապետարանի աշխատակիցների վերաբերյալ

Աշխատանքի վարձատրության գծով 2019 թվականի բյուջեով՝ ճշտված պլանով նախատեսվել է 300,477.40 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսը կազմել է 300,475.6 հազ. դրամ, այդ թվում.

Ա. Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 284,677.4 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 284,675.60 հազ. դրամ:

Բ. Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածով՝ ճշտված պլանով նախատեսվել է 15,800.00 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 15,800.00 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացում, ուսումնասիրվել է ՀՀ պետական սահմանը հատած աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը և համեմատվել է աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի հետ: Արդյունքում պարզվել է, որ հինգ աշխատակիցներ աշխատանքային օրերի ընթացքում առանց հրամանների հատել են ՀՀ պետական սահմանը և Հայաստանի Հանրապետություն են վերադարձել. երեք աշխատակիցներ մեկ օր հետո, մեկ աշխատակից 2 օր հետո և

մեկ աշխատակից 5 օր հետո: Նույն օրերի համար նշված աշխատակիցներին հաշվարկվել և վճարվել է 39.28 հազ. դրամ աշխատավարձ:[11]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում ՀՀ պետական սահմանը հատած Վանաձորի համայնքապետարանի աշխատակիցների վարձատրության մասով:

28. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող ՀՈԱԿ-ների աշխատակիցների վարձատրության վերաբերյալ

Վանաձորի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող նախադպրոցական հաստատությունների 2019 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 524,545.30 հազ. դրամ, որից 303,665.90 հազ.դրամը՝ աշխատանքի վարձատրության գծով:

Վանաձորի համայնքապետարանի ենթակայության ներքո գտնվող մշակութային կազմակերպությունների 2019 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 444,622.50 հազ. դրամ, որից 398,769.20 հազ. դրամը՝ աշխատանքի վարձատրության գծով:

Հաշվեքննությամբ պարզվեց, որ Ա.Գ.-ն աշխատում է Վանաձորի համայնքապետարանի երկու ՀՈԱԿ-ում միաժամանակ, զբաղեցնելով տնօրենի (1 հաստիքային միավոր) և գլխավոր բալետմայստերի (1 հաստիքային մաիվոր) պաշտոնը: Ընդ որում, զբաղվում է մանկավարժական գործունեությամբ, համատեղելով տնօրենի պաշտոնը: Սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրք» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով սահմանված՝ «Տարբեր գործատուների կամ նույն գործատուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից:» Հետևաբար, տնօրենի և գլխավոր բալետմայստերի պաշտոնները օրական 8-ական ժամով

[11]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված խեղաթյուրման վերաբերյալ:

աշխատակիցը չի կարող կատարել, ինչպես ներկայացված է երկու ՀՈԱԿ-ների աշխատաժամանակի տեղեկագրերում:

Հաշվեքննության ընթացում նաև ուսումնասիրվել է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ՍԷԿՏ համակարգ) արտահանված ՀՀ պետական սահմանը հատած Վանաձորի համայնքապետարանի կրթական և մշակութային կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը և համեմատվել է 2019 թվականի աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի հետ: Արդյունքում պարզվել է, որ աշխատակիցները աշխատանքային օրերի ընթացքում առանց հրամանների հատել են ՀՀ պետական սահմանը և հետ են վերադարձել: Սակայն նույն օրերի համար ներքոնշյալ աշխատակիցներին հաշվարկվել և վճարվել է աշխատավարձ նախադպրոցական հաստատության աշխատակցին՝ 1,653 դրամ, արվեստի դպրոցների աշխատակիցներին՝ 234,680 դրամ:[12]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում ՀՀ պետական սահմանը հատած Վանաձորի համայնքապետարանի կրթական և մշակութային կազմակերպությունների աշխատակիցների վարձատրության մասով:

29. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. ձեռքբերման գների վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով ՀՈԱԿ-ներում սննդի ձեռքբերման մրցույթների հաղթած գները և համադրելով դրանք ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ կողմից տրամադրված 2019 թվականին իրականացված մշտադիտարկման արդյունքների հետ, պարզվում է, որ տավարի մսի գինը 2019թ. տատանվել է 2,680-3,280 դրամ, իսկ կարագինը՝ 3,580-4,270 դրամ:

---

[12] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված խեղաթյուրման վերաբերյալ:

Համադրելով, 2019 թվականի ընթացքում, ՀՈԱԿ-ների կողմից ընդհանուր ձեռքբերված 5,100.5 կգ 1-ին կարգի տավարի մսի գինը հանձնաժողովի կողմից տրամադրված առավելագույն գնի հետ՝ 3,300 դրամ, ստանում ենք հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 20, հազ.դրամ

	ՀՈԱԿ-ի անվանում	**գին**	**քանակ**	**տարբերություն**	**ընդհանուր տարբերություն**
1	«Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.6	51	66.3	465.9
		4.2	444	399.6	
2	«Վանաձոր համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.5	8	9.6	77.6
		4.3	5	5	
		4.2	70	63	
3	«Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.5	7	8.4	54.75
		4.2	51.5	46.35	
4	«Վանաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	177	194.7	641.5
		4.2	183	164.7	
		4	403	282.1	
5	«Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.5	8	9.6	107.75
		4.2	86.5	77.85	
		4	29	20.3	
6	«Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	85.5	94.05	315.1
		4.2	81.5	73.35	
		4	211	147.7	
7	«Վանաձոր համայնքի թիվ 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	42	46.2	140.95
		4.2	41.5	37.35	
		4	82	57.4	
8	«Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.7	18	25.2	189.9
		4.2	183	164.7	
9	«Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ	4.7	10	14	299.3

	Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.2	317	285.3	
10	«Վանաձոր համայնքի Մարգարիտ Մատինյանի Թիվ 19 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.7	8	11.2	169.6
		4.2	176	158.4	
11	«Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.7	48	67.2	302.1
		4.2	261	234.9	
12	«Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.5	13	15.6	127.2
		4.2	124	111.6	
13	«Վանաձոր համայնքի թիվ 30 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	104	114.4	423.2
		4.2	137	123.3	
		4	265	185.5	
14	«Վանաձոր համայնքի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.3	50	50	153.5
		4.2	45	40.5	
		4	90	63	
15	«Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.7	13	18.2	90.2
		4.2	80	72	
16	«Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.5	15	18	98.1
		4.2	89	80.1	
17	«Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	29	31.9	115.9
		4.2	42	37.8	
		4	66	46.2	
18	«Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.7	34	47.6	412.1
		4.2	405	364.5	
19	«Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	39	42.9	145.45
		4.2	45.5	40.95	
		4	88	61.6	
20	«Վանաձոր համայնքի թիվ 41 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4.4	49.2	54.12	200.53
		4.2	66	59.4	
		4	124.3	87.01	
Ընդամենը			**5100.5**	**4530.63**	**4530.63**

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության ընթացքում Ձեր կողմից 1-ին կարգի տավարի մսի համար ուսումնասիրվել և հիմք են վերցվել պայմանագրային քանակները և պայմանագրային գները, որոնք համադրվել են աղյուսակ 35-ում: Համադրման արդյունքում գոյացել է 7,444.0 հազար ՀՀ դրամ բյուջեի գերածախս, սակայն փաստացի վնասի չափը հաշվարկելու համար, անհրաժեշտ է հիմք վերցնել փաստացի մատակարարված քանակները և փաստացի ձեռքբերման արժեքները, որոնք համադրելով ստանում ենք այլ պատկեր՝ փաստացի ձեռքբերված քանակ 5,003 կգ և փաստացի գերածախս՝ 4,446.18 հազ. դրամ:

Պետք է նշել նաև, որ առաջացած գերածախսի տարբերությունը, որը առաջանում է պայմանագրային և փաստացի ձեռքբերման արժեքներով հաշվարկելիս, կապված է մանկապարտեզների կողմից ապրանքի քանակի առավելագույն պլանավորման հետ, հետևաբար մանկապարտեզները ձեռք են բերել ավելի քիչ քանակ, քան նախատեսել են ձեռք բերել տարեսկզբին, արդյունքում նվազեցնելով բյուջեի գերածախսը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը ընդունվել է մասնակի: Ինչպես ներկայացված է աղյուսակում վերահաշվարկի արդյունքում 2019թ. ձեռք բերված 1-ին կարգի տավարի մսի քանակը կազմել է 5,100.5 կգ: Տարբերությունը /գերածախսը/ կազմում է 4,529.63 հազ դրամ:

Եզրակացություն

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կարգի կազմակերպման» որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հնարավոր կլիներ բանակցություններ վարելու պարագայում ձևավորել որոշակի խնայողություններ:

Առաջարկություն

Վանաձորի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ նախահաշվային գների որոշման միասնական սկզբունք սահմանելու և այդ սկզբունքների հիման վրա միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքների համար միասնական գին սահմանելու նպատակով:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

30. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս

Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. նախագծի վերաբերյալ

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների նախագծով նախատեսված է 1,139 ք.մ մամլոգրանիտե սալիկներից հատակի տակ ցեմենտ/ավազային հարթեցուցիչի համար Bp Φ3 100x100 տեսակի 400ք.մ ամրանային ցանցի տեղադրում: Հաշվի առնելով, որ սալիկների տակ ավազի շերտի հաստությունը կազմում է մոտավոր 40 սմ անհրաժեշտ էր նախագծով նախատեսել ամբողջ մակերևույթով ամրանային ցանցի տեղադրում, այսինքն 1,139 քառ.մ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

31. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Աշխատանքների ֆիզիկական զննության վերաբերյալ. Միավորի արժեքների փոփոխության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Վանաձորի «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի փաթեթում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը կազմում է 87,884.60 հազ. դրամ: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն, որի հետ 2019 թվականի սեպտեմբերի 18-ին կնքվել է թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագիրը:

Պայմանագրի գումարը (առանց լրացուցիչ համաձայնագրի) կազմել է 72,000.00 հազ. դրամ:

Կնքված պայմանագրում ձեռքբերված աշխատանքների ծավալը մնացել է անփոփոխ, արդյունքում կատարվել է աշխատանքների յուրաքանչյուր տողի միավոր արժեքի փոփոխություն՝ ծավալաթերթ-նախահաշվային արժեքի՝ (87,884.60 հազ. դրամ) նկատմամբ կիրառելով հետևյալ գործակիցը՝ պայմանագրային գին/ ծավալաթերթ-նախահաշվային գին: Արդյունքում ստացվել է 0,819409 գործակից՝ (59,833.47/73,020.27):[13]

---

[13] Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

32. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Նախագծի փոփոխության վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագրով նշված նախագծով հաստատվել է թանգարանի 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգման աշխատանքներ: Սակայն, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել 3-րդ հարկի երկու ծայրային մասերում գտնվող աշխատասենյակների և թանգարանային նմուշների պահասենյակի վերանորոգման աշխատանքները, բայց կատարվել է նաև 1-ին հարկում վերանորոգման աշխատանքներ: Կատարողական ակտում չի ներկայացված 1-ին հարկի աշխատանքների բացվածքը, բացառությամբ հատակի և պատուհանագոգերի մամլոգրանիտային սալիկապատման աշխատանքների ծավալը, որ կազմում է 55ք.մ՝ 1,079.98 հազ.դրամ գումարային արտահայտությամբ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

33. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Սալիկների նախագծային չափսերի վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագրի հավելված թիվ 1 ծավալաթերթ-նախահաշվում չի նշված տեղադրվելիք սալիկների չափսը և արտադրման երկիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշման, 03.2019թ. ինֆորմացիոն տեղեկագրի Շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների՝ նախահաշվում ներկայացված մամլոգրանիտե սալիկի 13,729 դրամ միավորի արժեքը համապատասխանում է 400x800մմ չափսերով մամլոգրանիտե սալիկներին՝ արտադրության երկիրը՝ Չինաստան: Նշված գնին ավելացնելով աշխատանքների

ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված տեղեկատվության վերաբերյալ:

կատարման և ծախսված նյութերի արժեքը՝ սալիկի ծավալաթերթ-նախահաշվային արժեքը, ներառյալ կատարված աշխատանքը, կազմել է 23,959 դրամ:

Քանի որ ծավալաթերթ-նախահաշվում չի նշվել տեղադրվելիք սալիկների չափսը և արտադրող երկիրը, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից տեղադրվել է կերամիկագրանիտային սալիկներ 580x580մմ չափսերի (արտադրության երկիրը՝ Իրան): Կատարողական ակտում սալիկների, արժեքը՝ 19,636 դրամ: Սալիկի միավոր արժեքը ստացվել է նախահաշվային արժեքի՝ 23,959 դրամի նկատմամբ կիրառելով հետևյալ գործակիցը՝ պայմանագրային գին/նախահաշվային գին՝ 0,819409 գործակից:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

34. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Նախահաշվի վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագրի հավելված թիվ 1 ծավալաթերթ-նախահաշվում նախատեսված՝

1. Գրանիտե հատակի քանդում՝ 52 քառ.մ մակերեսով 24.388 ՀՀ դրամ գումարով
2. Աստիճանների և աստիճանաճակատների գրանիտե սալիկների հղկում՝ 98 քառ.մ մակերեսով 192.511 ՀՀ դրամ գումարով աշխատանքները կատարողական ակտերում չեն ներառվել:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

35. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծրագիր. տնտեսագիտական հոդված՝ 5113. օբյեկտ՝ «Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում. Օդափոխիչների վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 պայմանագրի հավելված թիվ 1

ծավալաթերթ-նախահաշվում նախատեսված 2,990.98 հազ. դրամ ընդհանուր գումարով 48 հատ 20 կվտ ընդհանուր հզորությամբ առաստաղային օդափոխիչների տեղադրման փոխարեն տեղադրվել է 9 հատ (յուրաքանչյուրը 3կվտ հզորությամբ 900խմ/ժ) օդափոխիչներ նույն արժեքով, սակայն որևէ օդափոխիչի տեղադրում չի ներկայացված կատարողական ակտերում: Փաստացի, տեղադրվել է 9 հատ օդափոխիչ՝ յուրաքանչյուրը 3 կվտ հզորությամբ:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

36. Սանիտարական մաքրման և աղբահանության գծով 2019թ-ի համար անցկացված գնումների գործընթացի վերաբերյալ

2019թ-ին Վանաձոր համայնքի կարիքների համար սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունների ձեռքբերման համար գնումը իրականացվել է բաց ընթացակարգով: Պետք է նշել, որ յուրաքանչյուր գոտու աղբահանության և սանիտարական մաքրման համար հայտ են ներկայացրել միայն մեկ կազմակերպություն և հաղթող է ճանաչվել տվյալ կազմակերպությունը, նախահաշվային գնից ոչ էական շեղումներով:

Ստորև աղյուսակում ներկայացվում է մրցույթի հաղթող կազմակերպությունները, իրենց գնային առաջարկներով և գնման հայտով պատվիրատուի կողմից պահանջված որակավորման չափանիշներին բավարարող անհրաժեշտ «Աշխատանքային ռեսուրսներով»:

Աղյուսակ 21,հազ.դրամ

Գոտի	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը	Գնային առաջարկը կամ պայմանագրային գումարը	Աշխատողների թիվը /մարդ/		
				Հավաքարար	Բարձող բանվոր	Վարորդ
I	Է.Էդարյան ՍՊԸ	44,346.57	44,320.00	5	4	4
II	Պագամի ՍՊԸ	42,768.15	42,750.00	4	4	4
III	Վանաձորի	53,207.78	53,180.00	5	4	4

	Սանմաքրում ԲԲԸ					
IV և VII	Էկովան ՍՊԸ	40,248.26	40,200.00	6	5	5
V	Գարիկ Ղափանյան ՍՊԸ	25,727.39	25,700.00	4	3	3
VI	Ա.Մկրտչյան ՍՊԸ	37,701.92	37,690.00	5	4	4
	Ընդամենը	***244,000.07***	***243,840.00***			

Հաշվեքննության ընթացքում Վանաձորի համայնքապետարանից պահանջվեց 2019 թվականի ընթացքում օպերատորների մոտ գրանցված և սանիտարական մաքրում իրականացնող բանվորների թվի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ ներկայացված տեղեկատվության կատարվել է վերլուծություն կապված յուրաքանչյուր բանվորին օրական փաստացի բաժին ընկնող մաքրվող մակերեսների հետ: Ստորև աղյուսակում ներկայացվում է վերլուծության արդյունքները՝

Աղյուսակ 22

Գոտի	***Կազմակերպության անվանումը***	***Մաքրվող մակերեսը /քմ օրական/***	***Սանիտարական մաքրող բանվորների թիվը /մարդ/***		***Մեկ բանվորին միջինը բաժին ընկնող օրական մաքրվող մակերեսը /քմ/***	
			Որակավորման չափանիշներով պահանջված	***Փաստացի***	***Որակավորման չափանիշներով***	***Փաստացի***
I	Է.Էդարյան ՍՊԸ	41,685	5		8,337	-
II	Պագամի ՍՊԸ	36,110	4	4	9,028	9,028
III	Վանաձորի Սանմաքրում ՍՊԸ	75,880	5	6	15,176	12,647
IV և VII	Էկովան ՍՊԸ	40,528	6	7	6,755	5,790
V	Գարիկ Ղափանյան ՍՊԸ	55,570	4	4	13,893	13,893
VI	Ա.Մկրտչյան ՍՊԸ	71,150	5	8	14,230	8,893
	Ընդամենը	***320,923***				

Այսպիսով, ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2019 թվականին որակավորման չափանիշների մասով՝ ըստ գոտիների մեկ բանվորի հաշվարկով օրական միջին բաժին ընկնող մաքրվող մակերեսը կազմել է 6,755 քմ-ից մինչև 15,176 քմ, իսկ փաստացի գրանցված բանվորների մասով՝ 5,790 քմ-ից մինչև 13,893 քմ կամ երկու դեպքում էլ որևէ մեխանիզմ կամ չափորոշիչ չի գործել, որով կարգավորվեր տվյալ գործառույթը: Պետք է նշել, որ առաջին գոտում

սանիտարական մաքրում և աղբահանություն իրականացնող Է.Էդարյան ՍՊԸ հետագայում լուծարվել է:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

2019 թվականին համայնքում սանիտարական մաքրման մասով որևէ մեխանիզմ կամ չափորոշիչ չի գործել, որով կարգավորվեր տվյալ գործառույթը: Որակավորման չափանիշների մասով՝ ըստ գոտիների մեկ բանվորի հաշվարկով օրական միջին բաժին ընկնող մաքրվող մակերեսը կազմել է 6,755 քմ-ից մինչև 15,176 քմ, իսկ փաստացի գրանցված բանվորների մասով՝ 5,790 քմ-ից մինչև 13,893 քմ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Համայնքապետարանի սանիտարական մաքրման սխեմաներում ներառել սանիտարական մաքրման տարածքներին վերաբերող մանրամասն հաշվարկ, որը կապահովի նաև մրցույթի համար որակավորման չափանիշներին բավարարող անհրաժեշտ «Աշխատանքային ռեսուրսներ»՝ ճիշտ հաշվարկներ կատարելու համար:

37. Վանաձորի համայնքապետարանի ենթակայության կրթական ոլորտի ՀՈԱԿ-ներում 2019թ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներ. նախահաշվային գների վերաբերյալ

Ուսումնասիրելով 2019թ. նախահաշվային գները պարզվում է, որ նախահաշվային գների որոշման համար որևէ միասնական սկզբունք չի կիրառվել: Ուսումնասիրության համար իրականացված գնումների շուրջ 100 ապրանքատեսակների ցանկերից առանձնացվել են որոշակի ապրանքներ, որոնց նախահաշվային գների տարբերությունները առավել են՝

Աղյուսակ 23, դրամ

Չափաբաժնի		**2019 թվական գնման հայտով նախատեսված գները**	
համարը	**անվանումը**	Առավել ցածր գին	Առավել բարձր գին
1	կարտոֆիլ 1	210	550
2	կաղամբ 1	100	300

3	գազար 1	180	450
4	վարունգ 1	400	900
5	լոլիկ 1	500	900
6	բազուկ 2	250	400
7	Մուրաբա	2100	2500
8	Մանդարին	350	550
9	տոմատի մածուկ	800	1000
10	ցորենաձավար	220	350
11	Ոլոռ	250	400
12	հնդկաձավար	290	450
13	Բրինձ	370	500
14	Ոսպ	330	450
15	տավարի միս 1-ին կարգի	4300	4700
16	տավարի միս 2 կարգի	3600	4300
17	հավի միս 1-ին կարգի	2300	2600
18	յուղ հալած	1600	2250
19	Կարագ	4400	4700
20	Չամիչ	1200	1600

Նախահաշվային գների միասնական դիտարկման պարագայում հնարավոր կլիներ ապահովել խնայողությունների ավելի մեծ մակարդակ: Բացի այդ նշենք, որ նախահաշվային գների և հաղթած գների էական տարբերություն չկա:

Հարկ ենք համարում նշել, որ որոշ ՀՈԱԿ-ներ, 2019 թվականի ընթացքում մատակարարների հետ կնքված համաձայնագրերով ունեցել են տավարի մսի որոշակի գնիջեցում՝ 4600-ից դարձել է 4200, 4400-ից՝ 4200, 4400-ից՝ 4000, որի արդյունքում ունեցել են նաև որոշակի խնայողություններ: Նշենք նաև, որ նույն մատակարարի կողմից ՀՈԱԿ-ներում դրսևորվել է տարբերակված մոտեցում:[14]

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Նախահաշվային գների որոշման միասնական սկզբունք սահմանելու և այդ սկզբունքների հիման վրա միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող

[14]Սույն մասով առավել մանրամասն տեղեկատվությունը՝ համաձայն «Հաշվեքննիչ պալատի» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ կազմվել, արձանագրվել, փաստաթղթավորվել է և համաձայն Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում ստորագրել է՝ չունենալով առարկություններ և բացատրություններ կազմված հաշվեքննության արձանագրությունում նշված տեղեկատվության վերաբերյալ:

ապրանքների համար միասնական գին սահմանելու պարագայում սննդի ձեռքբերման գործընթացում հնարավոր կլինի ունենալ էական խնայողություններ:

Առաջարկություն

Վանաձորի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ նախահաշվային գների որոշման միասնական սկզբունք սահմանելու և այդ սկզբունքների հիման վրա միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքների համար միասնական գին սահմանելու նպատակով:

38. ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված մրցույթների մասնակիցների վերաբերյալ

2019 թվականին սննդի գնումների ծավալը կազմել է 153,639.7 հազ. դրամ: Հացի համար հայտարարված թվով 20 մրցույթներում մասնակցել են թվով 5 մատակարարներ, որից՝

1. «Լիլիթ Չոբանյան» ԱՁ - մասնակցել է թվով 4 մրցույթի, եղել է միակ մասնակից և հաղթող /5,977.60 հազ. դրամ/.
2. «Սեդա Բոջուկյան» ՍՊԸ - մասնակցել է թվով 5 մրցույթում, եղել է միակ մասնակից և հաղթող /5,966.30 հազ. դրամ/
3. «Պլուտոն» ՍՊԸ - մասնակցել է թվով 5 մրցույթում, եղել է միակ մասնակից և հաղթող /6,438.60 հազ. դրամ/
4. «Բարնոր» ՍՊԸ - մասնակցել է թվով 3 մրցույթում, եղել է միակ մասնակից և հաղթող /5,269.50 հազ. դրամ/
5. «Վաղինակ Փոքր» ՍՊԸ - մասնակցել է թվով 3 մրցույթում, եղել է միակ մասնակից և հաղթող /4,196.70 հազ. դրամ/:

Այլ ապրանքատեսակների համար հայտարարված թվով 20 մրցույթներում մասնակցել են հիմնականում թվով 3 մատակարարներ, որից՝

1. «Արամ Սերվիս» ՍՊԸ - մասնակցել է թվով 7 մրցույթում, եղել է հիմնական մասնակից և հաղթող.
2. «Սմայլս» ՍՊԸ – մասնակցել է թվով 20 մրցույթի միայն մեկ ապրանքատեսակի համար /խնձոր/ և հաղթող, սիկ որպես հիմական մասնակից մասնակցել է թվով 5 մրցույթի և եղել է հիմնական հաղթող /թվով 2 մրցույթներում մասնակից է եղել նաև «Պլուտոն» ՍՊԸ-ն, սակայն յուրաքանչյուրը հաղթել է իր կողմից ներկայացված չափաբաժիններով:
3. «Սպարապետ» ՍՊԸ - մասնակցել է թվով 8 մրցույթում, եղել է հիմնական մասնակից և հաղթող /բացառությամբ խնձորի/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքներից է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, սակայն իրականացված մրցույթներում դիտարկվում է մրցակցության ցածր մակարդակ, որն էլ իր հերթին բերում է ոչ օբյեկտիվ գնային առաջարկների:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Իրականացված մրցույթներում դիտարկվում է մրցակցության ցածր մակարդակ, որն էլ իր հերթին բերում է ոչ օբյեկտիվ գնային առաջարկներին:

Առաջարկություն

Համայնքապետարանի լիազորությունների շրջանակներում ձեռնարկել համապատասխան միջոցներ պայմանագրերի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով:

39. ՀՈԱԿ-ների սննդի ձեռքբերման համար կատարված ծախսերի վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով ՀՈԱԿ-ներին սննդի համար տրամադրվող ֆինանսավորումը, պարզվում է որ բացակայում է միասնական սկզբունք: Համեմատելով տրամադրած գումարները ՀՈԱԿ հաճախող սաների թվի հետ պարզվում է, դրանց միջև առկա են որոշակի տարբերություններ:

Աղյուսակ 24 , հազ.դրամ

Հ/հ	Կազմակերպության անվանում	Ընդամենը սննդի ծախս	Սաների թիվ	Խմբերի քանակ	Սննդի ծախսի միջին գումար 1 սանի հաշվով
1	«Վանաձոր համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան 2	12,850.20	169	4	76.10

	մանկապարտեզ» ՀՈԱԿ				
2	«Վանաձոր համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	3,563.00	48	2	74.20
3	«Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	1,990.60	36	2	55.30
4	«Վանաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13,275.70	191	5	69.50
5	«Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	2,911.80	37	2	78.70
6	«Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13,055.60	193	6	67.60
7	«Վանաձոր համայնքի թիվ 10 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4,884.00	56	2	87.20
8	«Վանաձոր համայնքի թիվ 11 մանկապարտեզ» ՀՈԱԿ	7,727.40	95	4	81.30
9	«Վանաձոր համայնքի թիվ 15 Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզ» ՀՈԱԿ	10,816.30	140	5	77.20
10	«Վանաձոր համայնքի Մարգարիտ Մատինյանի Թիվ 19 մանկապարտեզ» ՀՈԱԿ	7,655.90	126	4	60.70
11	«Վանաձոր համայնքի թիվ 24 մանկապարտեզ» ՀՈԱԿ	12,959.10	140	4	92.50
12	«Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ	3,940.00	74	3	53.20
13	«Վանաձոր համայնքի թիվ 30 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13,648.70	200	5	68.20
14	«Վանաձոր համայնքի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ	10,259.10	150	4	68.40
15	«Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» ՀՈԱԿ	5,399.90	64	2	84.30
16	«Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» ՀՈԱԿ	7,887.10	92	4	85.70
17	«Վանաձոր համայնքի թիվ 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4,828.10	70	2	68.90
18	«Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» ՀՈԱԿ	11,096.40	153	4	72.50
19	«Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզ» ՀՈԱԿ	4,870.60	54	2	90.20
20	«Վանաձոր համայնքի թիվ 41 մանկապարտեզ» ՀՈԱԿ	3,583.20	36	2	99.50

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից, մեկ սանի հաշվով սննդի գումարը տատանվում է 53.20 հազ. դրամից մինչև 99.50 հազ.դրամ: Հատկանշականն այն է, որ նույն սաների թիվ ունեցող ՀՈԱԿ-ները՝ թիվ 4 մանկապարտեզի և թիվ 41 մանկապարտեզի միջև առկա է 55% տարբերություն:

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել:

Եզրակացություն

Բացակայում է մեկ սանի հաշվով ձեռք բերվող ապրանքատեսակների և քանակների միասնական մոտեցումը:

Առաջարկություն

Վանաձորի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ ըստ մեկ սանի համար ձեռք բերվող ապրանքատեսակների և քանակների միասնական սկզբունք սահմանելու նպատակով:

40. Հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների ապառքների ժամկետայնության վերաբերյալ

Համայնքապետարանի 2019 թվականի բյուջեի եկամուտների հաշվարկների, կատարված վճարումների և գոյացած ապառքների ուսումնասիրության շրջանակներում համայնքի հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների բազաներից կազմվել է վիճակագրական ընտրանք, որում ներառվել է ընդհանուր թվով 36 ֆիզիկական և իրավաբանական անձիք: Նշված անձնանց ուղարկվել է ծանուցագրեր հաստատելու համար 31.12.2019թ. դրությամբ պարտքը գույքահարկի, հողի հարկի և աղբահանության վճարների գծով: Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է նշված ընթացակարգի արդյունքները՝ կազմված ընտրանքի համար.

Աղյուսակ 25

Հ/հ	Ընթացակարգի արդյունք	Քանակ
1	Ուղարկվել է ծանուցագիր, որից	36
2	չեն ստացել ծանուցագրեր	23
3	ստացել են ծանուցագրեր, որից	13
4	չեն պատասխանել	6
5	պատասխանել են, որից	7
6	հաստատել են	3
7	չեն հաստատել	4

Համայնքապետարանի կողմից գույքահարկ, հողի հարկ վճարողների ապառքների գանձման ուղղությամբ 2019թ. կատարվել է 30 վարչական վարույթների լսումներ 18,991.50 հազ. դրամ գույքահարկի և 698.30 հազ. դրամ հողի հարկի ապառքների վերաբերյալ և հավաքագրվել է 1,176.10 հազ. դրամ գույքահարկի և 41.8 հազ. դրամ հողի հարկի գումարներ:

Հաշվեքննության ընթացքում կատարված հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարներ վճարողների ապառքների ժամկետայնության

վերլուծությունից պարզվել է, որ առկա են ապառքներ, որոնց առաջացման ժամկետը ավելի վաղ է քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը: Մասնավորապես, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետի ՝ «Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգումների և Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 2-ից 6-րդ կետերով սահմանված ուսումնասիրությունների արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե դրանք հարկ վճարողին առաջադրվել են խախտումը կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող երրորդ հարկային տարին լրանալուց հետո (բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի): Օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկին և փոխադրամիջոցների գույքահարկին վերաբերող բաժինների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու հարկային տարվան անմիջապես հաջորդող տասներորդ հարկային տարին լրանալուց հետո»: Նշվածից հետևում է, որ աղբահանության վճարներից առաջացած ապառքների հայցային ժամկետայնությունը չի կարող գերազանցել դրանց առաջանալու տարվան հաջորդող երեք տարիներից հետո, իսկ հողի հարկի և գույքահարկի ապառքների վճարման հայցային վաղեմության ժամկետը սահմանվում է տասը տարի: Ուստի՝ վերը նշվածը կիրառվում է համայնքի հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների բազաների նկատմամբ:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է նշված ընթացակարգի արդյունքները.

Աղյուսակ 26, հազ.դրամ

Հարկ կամ վճար	Ֆիզիկական անձ		Իրավաբանական անձ		Ընդամենը	
	Վճարող	գումար	վճարող	գումար	վճարող	գումար
Հողի հարկ	395	9,491.60	8	8,473.90	403	17,965.50
Գույքահարկ	1738	39,674.40	32	11,874.60	1770	51,549.00

Աղբահանության վճար	**2304**	**75,628.30**	**165**	**6,866.10**	**2469**	**82,494.40**

Արդյունքում, համայնքի հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների ապառքների շտեմարանի վերլուծությունից, ինչպես նաև ընտրանքում ներկայացված հարկատուներից ստացված հաստատումների վելուծությունից ստացվում է, որ Համայնքապետարանը չի իրականացնում արդյունավետ վարչարարություն ապառքների հավաքագրման հարցում: Նշվածը ակնհայտ է այն հարկատուների մասով, ովքեր չեն բնակվում Համայնքապետարանի շտեմարանում գրանցված հասցեներով, համաձայն չեն իրենց ներկայացված ապառնքների հետ կամ ապառնքների ժամկետայնության վերլուծության հիման վրա ունեն անշարժ մնացորդներ (օրինակ՝ վերջին երկու տարվա ընթացքում չեն կատարել որևէ վճարում): Նշված հատկանիշներով հարկատուները Համայնքապետարանի կողմից կարող են համարվել ռիսկային և Համայնքապետարանից կարող է պահանջվել լրացուցիչ վարչարարական մեխանիզմների կիրառում: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է կատարել հարկատուների ստրատավորում՝ (ենթաբազմությունների տարանջատում) վերջիններիս ապառքների ժամկետայնության վերլուծության և Համայնքապետարանի շտեմարանում գրանցված հասցեում ֆիզիկապես չբնակվելու չափանիշի հիման վրա: Նշված ստրատաներով առաջակում ենք իրականացնել արդյունավետ հսկողության գործընթացներ ապառքների հավաքագրման նպատակով:

Եզրակացություն

Հաշվեքննության ընթացքում կատարված հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարներ վճարողների ապառքների ժամկետայնության վերլուծությունից պարզվել է, որ առկա են ապառքներ, որոնց առաջացման ժամկետը ավելի վաղ է քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը: Համայնքի հողի հարկի, գույքահարկի և աղբահանության վճարների ապառքների շտեմարանի վերլուծությունից, ինչպես նաև ընտրանքում ներկայացված հարկատուներից ստացված հաստատումների վելուծությունից ստացվում է, որ Համայնքապետարանում առկա է անհրաժեշտություն՝ բարձրացնելու ապառքների հավաքագրման վարչարարության արդյունավետությունը:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Կատարել հարկատուների ստրատավորում (ենթաբազմությունների տարանջատում) վերջիններիս ապառքների ժամկետայնության վերլուծության և Համայնքապետարանի շտեմարանում գրանցված հասցեում ֆիզիկապես

չբնակվելու չափանիշի հիման վրա: Նշված ստրատաներով առաջարկում ենք իրականացնել արդյունավետ հսկողության գործընթացներ ապառքների հավաքագրման նպատակով: